



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ՀԱՇՎԱՌՈՒՄ



Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ՀԱՇՎԱՌՄԱՆ 1-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ
ԵՎ ԴՐԱ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԼՐԱՑՄԱՆ

Հասցեամասի լրացումը

ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) **1-ԳՀՀ հարցաթերթի** լրացումը սկսվում է հասցեամասի լրացումից:

Առաջին հերթին լրացվում են **«բնակելի միավոր»**-ի և հաշվառման **«հարցաթերթ»**-ի համարները, որոնք պետք է հաշվային տեղամասի սահմանում համարակալվեն միասնական հերթական համարներով: Հասցեամասում լրացվում է նաև **հաշվառման, հրահանգչական և հաշվային տեղամասերի** համապատասխան համարները, որոնք հաշվարարին նախապես հայտնում է (տրամադրում է) հրահանգիչ-հսկիչը:

Եթե մեկ բնակելի միավորում բնակվում են մեկից ավելի տնային տնտեսություններ (վարում են առանձին գյուղատնտեսություն), ապա նրանց համար կազմվում են նույն բնակելի միավորի, սակայն տարբեր հարցաթերթերի համարներով առանձին հարցաթերթեր:

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարցաթերթի այս բաժնում լրացվում է **շրջանի, համայնքի, բնակավայրի** անվանումները, ինչպես նաև՝ տվյալ տնտեսության հասցեն (պողոտա, փողոց, նրբանցք, տան համարը առկայության դեպքում), հեռախոսի համարը և, առկայության դեպքում, նաև էլեկտրոնային փոստի հասցեն:

Մինչև հարցումը սկսելը հաշվարարը պետք է ճշտի, թե տնտեսության անդամներից ո՞վ կարող է ճշգրիտ պատասխանել հարցաթերթի հարցերին, և հարցումն անցկացնի նրա հետ:

Ուշադրություն` հաշվարարը պատասխանողին կարող է հուշել, որ հարցաթերթում բերված հարցերին ճշգրիտ պատասխանելու համար անհրաժեշտ է օգտվել համապատասխան աղբյուրներից (փաստաթղթերից):

Հարցման միջոցով լրացվում է **տնտեսության գլխավորի** անուն-ազգանունը:

«Ո՞վ է կառավարում տնտեսության գյուղատնտեսական աշխատանքները» հարցի պատասխանը լրացնելու համար անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «տնտեսության գլխավոր», «տնտեսության այլ անդամ» կամ «այլ անձ» տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

Կախված այն հանգամանքից, թե ինչ բնակավայրում է հաշվարարը լրացրել տվյալ տնային տնտեսության հարցաթերթը, անհրաժեշտ է համապատասխան (X) նշում կատարել «գյուղական տնային տնտեսության համար», «քաղաքային տնային տնտեսության համար» կամ «այգեգործական ընկերության անդամ հանդիսացող տնտեսության համար» տողերից որևէ մեկի համապատասխան վանդակում:

Մույն հաշվառման ընթացքում այգեգործական ընկերության անդամ հանդիսացող տնտեսությանը պատկանող հողերը դիտարկվում են որպես **տնամերձ հողեր և դրանց** չափերի վերաբերյալ տվյալները հաշվարկվում են հարցաթերթի աղյուսակներում տնամերձ հողերի համար նախատեսված համապատասխան սյունակներում:

Տվյալ տնտեսության համար լրացվող հարցաթերթում հողերի, գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական տեխնիկայի, շենք/շինությունների և այլնի վերաբերյալ տվյալները հավաքագրվում են անկախ այն հանգամանքից` դրանք պատկանում են տնտեսության գլխավորին, տնտեսության այլ անդամներից որևէ մեկին, թե

տնտեսության անդամներին՝ համասեփականության իրավունքով:

Ուշադրություն՝ հաշվարարը հարցաթերթի լրացման ժամանակ հարցաթերթում բերված բոլոր հարցերը՝ իրենց հնարավոր պատասխանների բոլոր տարբերակներով, պատասխանողի համար պետք է ընթերցի այնպես, ինչպես գրված է հարցաթերթում, քանզի հարցաթերթի հարցերին համապատասխանող աղյուսակների յուրաքանչյուր տող և սյունակ ենթադրում են պատասխան: Այն աղյուսակներում, որոնց տողերում պետք է լրացվեն թվային ցուցանիշներ, վերջիններիս առկայության դեպքում գրվում է համապատասխան թիվը, իսկ բացակայության դեպքում անպայման գրվում է «0»:

Այն աղյուսակներում, որտեղ հնարավոր պատասխանի դեպքում պահանջվում է կատարել համապատասխան (X) նշումը, ցուցանիշի բացակայության պարագայում «0» գրել չի պահանջվում, պատասխան չունեցող տողերին համապատասխան վանդակները կմնան դատարկ:

ԲԱԺԻՆ II. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ

Ընդհանուր տեղեկություններ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վերաբերյալ

Գյուղատնտեսական նշանակության հողերը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողատեսքերն են: Գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ հողատեսքերի բաժանվում են վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի և այլ հողատեսքերի:

Ըստ առանձին գյուղատնտեսական հողատեսքերի գործառնական նշանակության՝

«վարելահողը» գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի տակ կանոնավոր (սիստեմատիկ) մշակվող և օգտագործվող հողատեսքն է՝ ներառյալ բազմամյա կերային մշակաբույսերի (խոտաբույսերի) ցանքերը և ցելերը,

«բազմամյա տնկարկներ» պտղատու այգի և հատապտղանոց ու խաղողի այգի».

պտղատու այգին և հատապտղանոցը պտղատու այգիների և հատապտղանոցների տակ գտնվող հողատեսքն է՝ անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում, և հիմնվել են պտուղ և հատապտուղ ստանալու համար, ինչպես նաև պտղի և հատապտղի տնկարանների տարածությունները,

խաղողի այգին խաղողանոցների տակ գտնվող հողատեսքն է՝ անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում, և հիմնվել են խաղող ստանալու համար, ինչպես նաև խաղողի վազեր ստանալու համար նախատեսված տնկարանների տարածությունները,

«խոտհարքը» կանոնավոր (սիստեմատիկ) **խոտհնձի** համար օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքն է,

«արոտավայրը» անասունների կանոնավոր (սիստեմատիկ) արածեցման համար պիտանի և խոտհարքի տակ չօգտագործվող բնական կամ ցանովի խոտերի տակ գտնվող հողատեսքն է,

«այլ հողատեսքը» գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված, սակայն դեռևս գյուղատնտեսության արտադրության մեջ չօգտագործվող այլ հողերն են՝ աղուտներ, ավազուտներ, ձորեր, ձորակներ, քարքարոտ տարածություններ, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհներ և այլն:

«Տնամերձ հողը» տնտեսությանը (ընտանիքին) բնակավայրի վարչական տարածքում բնակության համար

սեփականության իրավունքով կամ օգտագործման այլ ձևերով (անհատույց) հատկացված հողն է:

Սույն **հաշվառման ընթացքում հաշվառվում է տնամերձ հողի** տարածությունն ամբողջությամբ՝ հողի վրա առկա շենք/շինությունների մակերեսի և գյուղատնտեսական նպատակով (այսինքն՝ այն տարածությունը, որն օգտագործվում է մշակաբույսերի մշակման համար, կամ որի վրա առկա են բազմամյա տնկարկներ՝ պտղատու ծառեր, հատապտուղներ և խաղողի վազեր՝ անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում) օգտագործված տարածության հանրագումարը:

Հարց 8. Տնտեսության հողերի քանակը (հողակտորներ) և դրանց տարածությունը (ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում) առ 10.10.2020թ.

Սույն հրահանգում «հողեր» ասելով պետք է հասկանալ գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այլ նշանակության հողերը, իսկ «վարձակալություն» հասկացությունը ենթադրում է վարձակալությունը վճարովի, ոչ վճարովի և/կամ այլ հիմունքներով:

«8.1.Տնտեսությունն ունի՝ հողեր (սեփական, վարձակալված՝ վճարովի, ոչ վճարովի և այլ հիմունքներով, վարձակալության տրված)» հարցի լրացման ժամանակ հաշվարարը պետք է հարցվողից ճշտի՝ տնտեսությունն ունի՝ սեփական և/կամ վարձակալված՝ վճարովի, ոչ վճարովի և այլ հիմունքներով, վարձակալության տրված հողեր ինչպես տվյալ համայնքում, այնպես էլ այլ համայնքներում և/կամ բնակավայրերում: Առկայության դեպքում հաշվարարը պետք է «Այո» վանդակում կատարի համապատասխան (X) նշումը և լրացնի **աղյուսակ 1-ի** համապատասխան տողերը և պյունակները:

Չունենալու դեպքում պետք է համապատասխան (X) նշումը կատարի «Ոչ» վանդակում և անցնի հարցաթերթի բաժին VI-ի հարցերի լրացմանը:

«Սեփական հողեր, ընդամենը» /կոդ 01/ տողում լրացվում են **աղյուսակ 1-ի** 1-3 պյունակները՝ ըստ պահանջվող տեղեկատվության:

1-ին պյունակում նշվում է տնտեսության սեփական հողակտորների ընդամենը քանակը, նույն տողի 2-րդ պյունակում՝ այդ հողակտորների ընդհանուր տարածությունը, իսկ 3-րդ պյունակում ընդհանուր տարածությունից

առանձնացվում է այլ համայնքներում/բնակավայրերում գտնվող սեփական հողերի տարածությունը:

Աղյուսակ 1-ի «որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր» /կոդ 02/ տողով առանձնացվում և ըստ 1-3 սյունակներում պահանջվող տեղեկատվության լրացվում են տնտեսության սեփական գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 1-ի «որից՝ տնամերձ հողեր» /կոդ 03/ տողով առանձնացվում և ըստ 1-3 սյունակներում պահանջվող տեղեկատվության լրացվում են տնտեսության սեփական տնամերձ հողերի վերաբերյալ տվյալները:

Աղյուսակ 1-ի վարձակալված հողերին՝ վճարովի, ոչ վճարովի և այլ հիմունքներով, և **վարձակալության տրված հողերին՝** վճարովի, ոչ վճարովի և այլ հիմունքներով, վերաբերող տվյալները լրացվում են նույն սկզբունքով, ինչպես սեփական հողերի վերաբերյալ տվյալները:

Տնտեսության կողմից ինչպես սեփական, այնպես էլ վարձակալված հողերը կարող են բաղկացած լինել մի քանի հողակտորներից:

Համապատասխան ցուցանիշները լրացնելիս հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ նույն հողակտորը կարող է բաղկացած լինել տարբեր հատվածներից, մի մասը լինի վարելահող, իսկ մյուս մասը՝ բազմամյա տնկարկ: Այս դեպքում այն պետք է դիտարկել որպես մեկ հողակտոր և աղյուսակի տվյալ հողակտորին համապատասխանող տողի 2-րդ սյունակում առանց տարանջատելու նշել հողակտորի ամբողջ տարածությունը հա-ով՝ 0.00 ճշտությամբ:

Ուշադրություն՝ եթե 8-րդ հարցի **աղյուսակ 1-ի** լրացման ընթացքում հաշվարարը ճշտի, որ տնտեսությունն ունի այլ համայնքներում/բնակավայրերում հողեր, ապա պետք է **1-ԳՀՀ հարցաթերթի** բաժին IV-ի լրացումից հետո անպայման տվյալ

տնտեսության համար լրացնի **1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածը:**

Ընդ որում, եթե կա/կան հող/հողեր մի քանի այլ համայնք(ներ)ում/բնակավայր(եր)ում, ապա լրացվում են նույնքան հավելվածներ՝ յուրաքանչյուր համայնքի/բնակավայրի համար:

Եթե տնտեսությունը չունի սեփական և/կամ վարձակալված գյուղատնտեսական նշանակության հողեր, ապա հաջորդ 9, 10 և 11 հարցերի համապատասխան 2-րդ, 3-րդ և 4-րդ աղյուսակներում լրացվում են միայն տնամերձ հողերին և այլ հողերին վերաբերող տվյալները, այնուհետև շարունակում են հարցաթերթի լրացումն ըստ հարցաթերթի համապատասխան բաժինների հերթականության:

**Հարց 9. Տնտեսության հողերի ընդհանուր տարածություններն
ըստ**

տիրապետման տեսակների

(տվյալ համայնքում/բնակավայրում)

առ 10.10.2020թ.

Աղյուսակի 2-ի 1-ին՝ «Մեփական հողեր» սյունակում, ըստ համապատասխան տողերի (*վարելահող /կող10/, պտղատու այգի (ներառյալ տնկարանները) /կող 11/, հատապտղանոց (ներառյալ տնկարանները) /կող 12/, խաղողի այգի (ներառյալ տնկարանները) /կող13/, խոտհարք /կող14/ և արոտավայր /կող15/*), լրացվում են տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող (ներառյալ վարձակալության տրված) և հարցման պահին տնտեսության համար **բնակության վայր հանդիսացող համայնքի/բնակավայրի** տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

«Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը» /կող 16/ տողի 1-ին սյունակում լրացվում են կող 10 + կող 11 + կող 12+ ...+ կող 15 1-ին սյունակի համապատասխան տողերի հանրագումարները:

Ուշադրություն՝

վարելահողը ներառում է վարելահողերի այն տարածությունները, որոնց վրա կատարվել է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք կամ թողնվել են բոլոր տեսակի ցելերի տակ, ինչպես նաև՝ տնտեսության կողմից չօգտագործված վարելահողերի տարածությունները,

պտղատու այգիները (ներառյալ տնկարանները), **հատապտղանոցները** (ներառյալ տնկարանները) և **խաղողի այգիները** (ներառյալ տնկարանները) պտղատու այգիների,

հատապտղանոցների ու խաղողի այգիների այն տարածություններն են, որոնցում տարվում են դրանց մշակման, տնկիներ աճեցնելու համար անհրաժեշտ և/կամ բերքահավաքի աշխատանքներ, ինչպես նաև՝ տնտեսության կողմից չօգտագործված տարածությունները,

խոտհարքը և արոտավայրը բնական խոտհարքների և արոտավայրերի այն տարածություններն են, որոնք գտնվում են տնտեսության տնօրինման տակ՝ անկախ նրանից՝ օգտագործվում են ըստ նպատակայնության, թե ոչ:

«Տնամերձ հողեր» /կոդ 17/ տողում ըստ համապատասխան սյունակների լրացվում են տնտեսության տնամերձ հողերի վերաբերյալ տվյալները:

«Այլ հողեր» /կոդ 18/ տողում ըստ համապատասխան սյունակների լրացվում են տնտեսության այլ հողերի վերաբերյալ տվյալները:

«Հողեր, ընդամենը» /կոդ 19/ (16+17+18) տողում ըստ համապատասխան սյունակների (սեփական հողեր, վարձակալված հողեր, վարձակալության տրված հողեր, հողեր ընդամենը) լրացվում են տնտեսության հողերի հանրագումարների վերաբերյալ տվյալները 0.00 հա ճշտությամբ:

Աղյուսակ 2-ի 2-րդ՝ «վարձակալված հողեր» սյունակում, ըստ համապատասխան տողերի, լրացվում են տնտեսության կողմից վարձակալված՝ վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով (որոնք գտնվում են հարցման պահին տնտեսության համար բնակության վայր հանդիսացող համայնքի/բնակավայրի տարածքում և անկախ նրանից՝ օգտագործվում են դրանք տնտեսության կողմից թե ոչ) հողերի տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

Աղյուսակ 2-ի 3-րդ՝ «վարձակալության տրված հողեր» սյունակում, ըստ համապատասխան տողերի առանձնացվում

և լրացվում են տնտեսության կողմից վարձակալության տրված՝ վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով հողերի (որոնք գտնվում են հարցման պահին տնտեսության համար **բնակության վայր հանդիսացող համայնքի/բնակավայրի** տարածքում) տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

Աղյուսակ 2-ի 4-րդ՝ «Հողեր ընդամենը (1+2-3)» սյունակում, ըստ համապատասխան տողերի հաշվարկվում և լրացվում են տնտեսության **սեփական** (ներառյալ վարձակալության տրված) և **վարձակալված** հողերի տարածությունների հանրագումարի և դրանցից վարձակալության տրված հողերի տարբերության վերաբերյալ համապատասխան տվյալները:

**ԲԱԺԻՆ III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ
ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲԱԶՄԱՄՅԱ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

*Ընդհանուր տեղեկություններ գյուղատնտեսական
մշակաբույսերի ցանքատարածությունների վերաբերյալ*

**Գյուղատնտեսական մշակաբույսերի
ցանքատարածություն** ասելով պետք է հասկանալ
վարելահողի վրա և պտղատու այգիների ու խաղողանոցների
միջշարքային տարածություններում բոլոր տեսակի
գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նպատակով
փաստացի կատարված ցանքի, ներառյալ կրկնակի ցանքի և
ենթացանքի տարածությունները հաշվետու ժամանակա-
հատվածում:

**Գյուղատնտեսական մշակաբույսերի
ցանքատարածություն-ների տվյալները,** ինչպես սեփական
հողերի վրա կատարված ցանքերի՝ առանց վարձակալության
տրված հողերի, այնպես էլ վարձակալված (վճարովի, ոչ
վճարովի կամ այլ հիմունքներով) հողերի վրա կատարված
ցանքերի հանրագումարն է:

Այսպես, եթե մշակաբույսի ցանքը կատարվել է մեկ կամ
մի քանի հողակտորի վրա՝ անկախ նրանից՝ դրանք գտնվում
են տվյալ համայնքի նույն կամ տարբեր բնակավայրերում,
սպա տվյալ մշակաբույսի ցանքատարածության վերաբերյալ
տվյալը պետք է ներառի բոլոր հողակտորների վրա
կատարված ցանքերի տարածությունների ընդամենը
հանրագումարը:

**Հարց 10. Ցանքատարածությունը
(տվյալ համայնքում/բնակավայրում՝
առանց վարձակալության տրված հողերի,
ներառյալ վարձակալված հողերում)
(01.08.2019թ. – 31.07.2020թ.)**

Աղյուսակ 3-ի «Հողեր դաշտում, հա» հատվածի 1-ին սյունակում ըստ համապատասխան տողերի (ըստ հարցաթերթում թվարկված գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակների) լրացվում են տնտեսության տվյալ համայնքի/բնակավայրի դաշտում գտնվող հողերի (ներառյալ վարձակալված) վրա կատարված ընդամենը ցանքերի վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

Նշված հատվածի «**որից՝ փաստացի ոռոգված**» 2-րդ սյունակի համապատասխան տողերում լրացվում են մշակաբույսերի ընդամենը ցանքատարածություններից այն տարածությունները, որոնք փաստացի ոռոգվել են:

Փաստացի ոռոգված են համարվում այն տարածությունները, որոնք, անկախ նրանից՝ համարվում են ոռոգվող, թե ոչ, ոռոգվել են ցանկացած աղբյուրից (ոռոգման ցանցերից, արտեզյան ջրերով, տարածքին մոտ գտնվող գետերի, լճերի ջրերից և այլն) ու եղանակով (արհեստական անձրևացման, կաթիլային, սկոսային և այլ):

Միայն բնական եղանակով՝ անձրևներ և այլ բնական տեղումներով, ոռոգվող հողերը չեն ընդգրկվում փաստացի ոռոգված հողերի մեջ:

Աղյուսակ 3-ի 3-րդ՝ «**Տնամերձ հողեր, մ²**», հատվածի 3-րդ սյունակում ըստ համապատասխան տողերի (ըստ հարցաթերթում թվարկված գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակների) լրացվում են տնտեսության կողմից տնամերձ հողերի վրա կատարված ցանքերի վերաբերյալ տվյալները՝ մ²:

«Հացահատիկային մշակաբույսերի» հարցաթերթում բերված տեսակներին համապատասխանող տողերը (ցորեն (*աշնանացան, գարնանացան*), գարի (*աշնանացան, գարնանացան*), հաճար, եգիպտացորեն հատիկի համար և այլն), ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

Աշնանացան *մշակաբույսերի*
ցանքատարածությունների մեջ ներառվում են այն տարածությունները, որոնք ցանվել են աշնանը և պահպանվել են մինչև գարնանացան մշակաբույսերի ցանքի ավարտը՝ առանց ոչնչացված տարածությունների:

Ոչնչացված *աշնանացան* *մշակաբույսերի*
տարածություններ են համարվում այն տարածությունները, որոնք վերացանվել են գարնանացան մշակաբույսերով կամ ամբողջությամբ ոչնչացվել են մինչև գարնանացանի սկիզբը և չեն վերացանվել:

«Աշնանացան ցորենի» /կոդ 01/ ցանքատարածությունն այն տարածությունն է, որի վրա աշնանը կատարվել է ցորենի ցանք, և որը պահպանվել է մինչև գարնանացանի ավարտը:

«Գարնանացան ցորենի» /կոդ 02/ ցանքատարածությունն այն տարածությունն է, որի վրա գարնանը կատարվել է ցորենի ցանք:

«Աշնանացան գարու» /կոդ 03/ ցանքատարածությունն այն տարածությունն է, որի վրա աշնանը կատարվել է գարու ցանք, և որը պահպանվել է մինչև գարնանացանի ավարտը:

«Գարնանացան գարու» /կոդ 04/ ցանքատարածությունն այն տարածությունն է, որի վրա գարնանը կատարվել է գարու ցանք:

«Հաճարի» /կոդ 05/ ցանքատարածությունն այն տարածությունն է, որի վրա գարնանը կատարվել է հաճարի ցանք:

«Եգիպտացորեն հատիկի համար» /կոդ 06/ այն տարածությունն է, որի վրա գարնանը կատարվել է հատիկի համար եգիպտացորենի ցանք:

«Այլ» /կոդ 07/ տողում լրացվում են բոլոր աշնանացան (աշնանացան տարեկան և այլն), *որոնք ցանվել են աշնանը և պահպանվել են մինչև գարնանացանի ավարտը*, և գարնանացան (գարնանացան՝ տարեկան, վարսակ և այլն), *որոնք ցանվել են գարնանը*, հացահատիկային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունները՝ բացառելով հարցաթերթում նշված հացահատիկային մշակաբույսերի տարածությունները:

«Ընդամենը» /կոդ 08/ (01+02+03+04+05+06+07) տողում, ըստ համապատասխան պյունակների, լրացվում է բոլոր տեսակի հացահատիկային մշակաբույսերի (ցորեն *(աշնանացան, գարնանացան)*, գարի *(աշնանացան, գարնանացան)*, հաճար, եգիպտացորեն հատիկի համար և այլ) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Հատիկաբնդեղենային մշակաբույսեր» /կոդ 09/ տողում, ըստ համապատասխան պյունակների, լրացվում է բոլոր տեսակի հատիկաբնդեղենային մշակաբույսերի (լոբի և ոլոռ հատիկի համար, սիսեռ, ոսպ և այլն) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Կարտոֆիլ» /կոդ 10/ տողում, ըստ համապատասխան պյունակների, լրացվում է կարտոֆիլի վաղահաս, միջահաս և ուշահաս տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Բանջարանոցային մշակաբույսերի» հարցաթերթում բերված տեսակներին համապատասխանող տողերը (կաղամբ, վարունգ, լոլիկ, սմբուկ, տաքդեղ, գազար, սեղանի ճակնդեղ, սոխ, սիստոր, կանաչ լոբի և այլն) լրացվում են *(անկախ հասունացման ժամանակահատվածի՝ վաղահաս, միջահաս, ուշահաս ժամանակահատվածի և օգտագործման*

նպատակայնության՝ պարենային, անասնակեր և այլն) հետևյալ կերպ.

«Կաղամբ» /կող 11/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է կաղամբի բոլոր տեսակների (ներառյալ ծաղկակաղամբ) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Վարունգ» /կող 12/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է վարունգի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Լոլիկ» /կող 13/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է լոլիկի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Սմբուկ (բադրիջան)» /կող 14/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սմբուկի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Տաքդեղ (բիբար)» /կող 15/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է տաքդեղի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների*

միջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:

«Գազար» /կոդ 16/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է գազարի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Սեղանի ճակնդեղ» /կոդ 17/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սեղանի ճակնդեղի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Սոխ » /կոդ 18/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սոխի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Մխտոր» /կոդ 19/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սխտորի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Կանաչ լոբի» /կոդ 20/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է կանաչ լոբու բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջարքերում*

կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:

«Այլ» /կող 21/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է հարցաթերթում չթվարկված մյուս բոլոր բանջարանոցային մշակաբույսերի (կանաչ ոլոռ, զանազան բանջարային կանաչեղեն և այլն) տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Ընդամենը» /կող 22/

(11+12+13+14+15+16+17+18+19+20+21) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակի բանջարանոցային մշակաբույսերի (կաղամբ, վարունգ, լոլիկ, սմբուկ, տաքդեղ, գազար, սեղանի ճակնդեղ, սոխ, սխտոր, կանաչ լոբի և այլն) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Բոստանային մշակաբույսերի» հարցաթերթում բերված տեսակներին համապատասխանող տողերը (ձմերուկ, սեխ) լրացվում են հետևյալ կերպ.

«Ձմերուկ» /կող 23/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է ձմերուկի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Սեխ» /կող 24/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սեխի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Ընդամենը» /կող 25/ (23+24) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակի բոստանային մշակաբույսերի (ձմերուկ, սեխ) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ *ներառյալ այգիների և խաղողանոցների միջջարքերում կատարված, կրկնակի ցանքերի և ենթացանքերի, ինչպես նաև սերմի համար ցանված տարածությունները:*

«Տեխնիկական մշակաբույսերի» հարցաթերթում բերված տեսակներին համապատասխանող տողերը (ծխախոտ, յուղատու մշակաբույսեր, շաքարի ճակնդեղ և այլն) ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

Տեխնիկական մշակաբույսերն այն մշակաբույսերն են, որոնք վերջնական սպառումից առաջ ունեն արդյունաբերական վերամշակման կարիք:

«Ծխախոտ» /կող 26/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է ծխախոտի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Արևածաղիկ (յուղատու և հրուշակեղենի)» /կող 27/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է արևածաղկի (յուղատու և հրուշակեղենի) տեխնիկական նպատակով (վերամշակման) օգտագործվող բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Շաքարի ճակնդեղ» /կող 28/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է շաքարի ճակնդեղի բոլոր տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Այլ» /կող 29/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է հարցաթերթում չթվարկված բոլոր մյուս տեխնիկական մշակաբույսերի (սորգո ավելի համար,

դեղագործական և կոսմետիկական արտադրության մեջ օգտագործվող տեխնիկական մշակաբույսեր՝ խորդենի, սոյա հատիկի համար, աշնանացան և գարնանացան ռապս և այլն) տեսակների ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Ընդամենը» /կող 30/ (26+27+28+29) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակի տեխնիկական մշակաբույսերի (ծխախոտ, յուղատու մշակաբույսեր, շաքարի ճակնդեղ և այլն) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Կերային մշակաբույսերի» հարցաթերթում բերված տեսակներին (միամյա խոտաբույսեր, բազմամյա խոտաբույսեր, կերի արմատապտուղ, սիլոսային մշակաբույսեր և այլն) համապատասխանող տողերը, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

«Միամյա խոտաբույսեր» /կող 31/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է միամյա խոտաբույսերի՝ կանաչ կերի և խոտի համար, ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Բազմամյա խոտաբույսեր» /կող 32/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բազմամյա խոտաբույսերի՝ կանաչ կերի և խոտի համար, ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը.

«տվյալ տարվա ցանք» /կող 33/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է «բազմամյա խոտաբույսեր» /կող 32/ տողից առանձնացնելով տվյալ տարում ցանված բազմամյա խոտաբույսերի՝ կանաչ կերի և խոտի համար, ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը,

«նախորդ տարիների ցանք» /կող 34/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է «բազմամյա խոտաբույսեր» /կող 32/ տողից առանձնացնելով նախորդ տարիներին ցանված բազմամյա խոտաբույսերի՝ կանաչ կերի և խոտի համար, ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Կերի արմատապտուղ» /կող 35/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է կերի արմատապտուղի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Սիլոսային մշակաբույսեր» /կող 36/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է սիլոսային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Այլ» /կող 37/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է վերը չթվարկված բոլոր մյուս կերային մշակաբույսերի (եգիպտացորեն՝ սիլոսի, սենածի և կանաչ կերի համար, արևածաղիկ՝ կերի համար, ռապս և այլն) ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Ընդամենը» /կող 38/ (31+32+35+36+37) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակի կերային մշակաբույսերի (միամյա խոտաբույսեր, բազմամյա խոտաբույսեր, կերի արմատապտուղ, սիլոսային մշակաբույսեր և այլն) ընդամենը ցանքատարածությունների՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունների, հանրագումարը:

«Շաղիկներ (բացի ջերմոցներում, ջերմատներում)» /կող 39/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր (ցանկացած) տեսակի ծաղիկների ընդամենը ցանքատարածությունների՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունների, հանրագումարը:

Տնտեսությունում նշված ժամանակահատվածում ջերմոցների և/կամ ջերմատների առկայության դեպքում.

«Ջերմոցներում (չջեռուցվող կառույց)» /կող 40/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է նշված ժամանակահատվածում ջերմոցներում աճեցված բոլոր մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը: Նշված ժամանակահատվածում մեկ անգամից ավել ցանք կատարելու դեպքում հաշվարկվում և գրվում է կատարված բոլոր ցանքերի հանրագումարային ցուցանիշը: Եթե տնտեսությունում առկա են մի քանի ջերմոցներ, ապա համապատասխան վանդակում անհրաժեշտ է նշել դրանց ընդամենը տարածություններում կատարված ցանքի հանրագումարային ցուցանիշը:

«Որից՝ բանջարանոցային մշակաբույսեր» /կող 41/ տողում, ըստ համապատասխան սյունակների, ջերմոց(ներ)ի ընդհանուր տարածությունից առանձնացվում, նույն սկզբունքով հաշվարկվում և լրացվում է միայն այն տարածությունը, որի վրա, բերք ստանալու նպատակով, աճեցվում են բանջարանոցային մշակաբույսեր (վարունգ, լոլիկ, տաքդեղ, սմբուկ և այլն):

«Որից՝ սնկեր» /կող 42/ և **«որից՝ ծաղիկներ» /կող 43/ տողերը** լրացվում են «որից՝ բանջարանոցային մշակաբույսեր» /կող 41/ տողի լրացման սկզբունքով:

Ջերմոցները փոքրածավալ կառույցներ են, որոնք ունեն շարժական ծածկոցներ (շրջանակներ՝ ապակեպատ կամ թաղանթապատ): Դրանք տաքացվող գրունտից և ջերմատներից տարբերվում են նրանով, որ չեն ջեռուցվում: Ջերմոցները շահագործում են գարնանը, ամռանը և աշնանը, և այն հնարավորություն է տալիս աճեցնել սածիլներ, ծաղիկներ և մշակել վաղահաս բանջարեղեն, սունկ:

«Ջերմատներում» /կող 44/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է նշված

Ժամանակահատվածում ջերմատներում աճեցված բոլոր մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը: Նշված ժամանակահատվածում մեկ անգամից ավել ցանք կատարելու դեպքում հաշվարկվում և գրվում է կատարված բոլոր ցանքերի հանրագումարային ցուցանիշը: Եթե տնտեսությունում առկա են մի քանի ջերմատներ, ապա համապատասխան վանդակում անհրաժեշտ է նշել դրանց ընդամենը տարածություններում կատարված ցանքի հանրագումարային ցուցանիշը:

«Որից՝ բանջարանոցային մշակաբույսեր» /կոդ 45/ տողում, ըստ համապատասխան սյունակների, ջերմատների ընդհանուր տարածությունից առանձնացվում, նույն սկզբունքով հաշվարկվում և լրացվում է միայն այն տարածությունը, որի վրա, բերք ստանալու նպատակով, աճեցվում են բանջարանոցային մշակաբույսեր (վարունգ, լոլիկ, տաքդեղ, սմբուկ և այլն):

«Որից՝ սնկեր» /կոդ 46/ և «որից՝ ծաղիկներ» /կոդ 47/ տողերը լրացվում են «որից՝ բանջարանոցային մշակաբույսեր» /կոդ 45/ տողի լրացման սկզբունքով:

Ջերմատները տարբեր չափերի կառույցներ են, որոնք հազեցած են ջերմատնային կոնստրուկցիաներով, սարքավորումներով, ջեռուցվում են և հնարավորություն են տալիս ողջ տարվա ընթացքում զբաղվել բուսաբուծական մթերքի արտադրությամբ (մշակել բանջարանոցային մշակաբույսեր, աճեցնել ծաղիկներ, սածիլներ, սունկ և այլն):

«Ցանքեր ընդամենը» /կոդ 48/ (08+09+10+22+25+30+38+39+40+44) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ընդամենը ցանքերի տարածությունների հանրագումարը:

«Այգիների և խաղողանոցների միջշարքերում» կատարված ցանքի մասին տվյալները ըստ հարցաթերթում թվարկված մշակաբույսերի (բանջարանոցային մշակաբույսեր, կերային մշակաբույսեր և այլն) համապատասխան տողերում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

«Բանջարանոցային մշակաբույսեր» /կոդ 49/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է նշված ժամանակահատվածում այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված բոլոր բանջարանոցային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Կերային մշակաբույսեր» /կոդ 50/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է նշված ժամանակահատվածում այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված բոլոր կերային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Այլ» /կոդ 51/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է նշված ժամանակահատվածում այգիների և խաղողանոցների միջշարքերում կատարված բոլոր վերը չթվարկված մյուս մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունների հանրագումարը:

«Այգիների և խաղողանոցների միջշարքերում, ընդամենը» /կոդ 52/ (49+50+51) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է այգիների և խաղողանոցների միջշարքային տարածություններում կատարված գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի ցանքատարածությունների հանրագումարը:

«Կատարվել է կրկնակի ցանք և ենթացանք» տողում հատվածում, հարցաթերթում բերված գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակներին (վարունգ, լոլիկ և այլն)

համապատասխանող տողերը, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

Կրկնակի ցանքը հիմնական մշակաբույսի բերքահավաքից հետո միննույն տարածության վրա մեկ այլ մշակաբույսի ցանքն է, որի նպատակն է միննույն տարածությունից մեկից ավելի անգամ ստանալ բերք:

Ենթացանքը միննույն հողակտորում միաժամանակ մեկից ավելի գյուղատնտեսական մշակաբույսերի խառը ցանքն է:

Ուշադրություն՝ այն, թե գյուղատնտեսական մշակաբույսերից որն է հիմնական և որն է ենթացանք, որոշվում է տնտեսության գյուղատնտեսական աշխատանքները կառավարողի կողմից:

«Վարունգ» /կող 53/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է այն տարածությունների հանրագումարը, որոնց վրա նշված ժամանակահատվածում կատարվել է վարունգի ցանկացած տեսակի կրկնակի ցանք, ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Լուիկ» /կող 54/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է այն տարածությունների հանրագումարը, որոնց վրա նշված ժամանակահատվածում կատարվել է լուիկի ցանկացած տեսակի կրկնակի ցանք, ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Այլ» /կող 55/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է այն տարածությունների հանրագումարը, որոնց վրա նշված ժամանակահատվածում կատարվել է հարցաթերթի սույն հատվածում չթվարկված բոլոր մյուս բանջարանոցային մշակաբույսերի (կաղամբ, սմբուկ, տաքդեղ, գազար, սեղանի ճակնդեղ, սոխ, կանաչ ոլոռ, կանաչ լոբի, զանազան բանջարային կանաչեղեն և այլն) տեսակների և այլ մշակաբույսերի կրկնակի ցանք, ինչպես նաև բոլոր վերը չթվարկված գյուղատնտեսական մշակաբույսերի

ենթացանք՝ ներառյալ սերմի համար ցանված տարածությունները:

«Կատարվել է կրկնակի ցանք և ենթացանք, ընդամենը» /կող 56/ տողում (53+54+55), ըստ համապատասխան սյունակների, լրացվում է այն տարածությունների հանրագումարը, որոնց վրա նշված ժամանակահատվածում կատարվել է գյուղատնտեսական որևէ մշակաբույսի կամ մշակաբույսերի (վարունգ, լոլիկ և այլն) կրկնակի ցանք և ենթացանք:

«Ցանքեր՝ առանց այգիների և խաղողանոցների միջջարքերի ու կրկնակի ցանքի և ենթացանքի, ընդամենը» /կող 57/ (48-52-56) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում կատարված գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի ցանքերի ընդամենը հանրագումարը՝ բացառելով այգիների և խաղողանոցների միջջարքերում կատարված ցանքերի տարածությունները և կրկնակի ցանքի ու ենթացանքի տարածությունները:

«Ցելեր բոլոր տեսակի» /կող 58/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակի ցելերի՝ սև և մաքուր (սիդերալ և կուլիսային), ընդամենը տարածությունների հանրագումարը: *Մև ցելեր համարվում են այն հողատարածությունները, որոնք հերկվել են նախորդ տարվա աշնանը և ցանքերի եզրափակիչ հաշվառում կատարելու պահին զբաղեցրած չեն զարնանացան մշակաբույսերի ցանքերով: Մաքուր ցելեր համարվում են այն հողատարածությունները, որոնք հերկվել են զարնանը և մինչև աշնանացան պահպանվել են մաքուր վիճակում: Միդերալ ցելեր համարվում են այն հողատարածությունները, որոնց վրա ցանվել է հատիկաբնդեղեն մշակաբույսեր, որը կանաչ վիճակում հերկվում է, որպեսզի հողը հարստացվի օրգանական նյութերով: Կուլիսային ցելեր համարվում են այն*

հողատարածությունները, որոնց վրա կատարվել է բարձրացողուն մշակաբույսերի ցանք՝ նպատակ ունենալով դաշտում ձմռանը ձյուն կուտակել:

«Չօգտագործված վարելահող» /կող 59/ տողում, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է տնտեսության սեփական (առանց վարձակալության տրված) և վարձակալված (վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով) այն վարելահողերի տարածությունների հանրագումարը, որոնք նշված ժամանակահատվածում չեն օգտագործվել տնտեսության կողմից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք կատարելու նպատակով:

Չօգտագործված վարելահող է համարվում նաև տարբեր պատճառներով չօգտագործված (որևէ գյուղատնտեսական մշակաբույսի ցանք չկատարված) կամ ոչ նպատակային օգտագործված վարելահողի այն տարածությունը, որից հավաքվում են բնական պայմաններում աճած խոտաբույսեր, կամ որտեղ արածեցվում են անասուններ, և բազմամյա կերային մշակաբույսերի այն տարածությունները, որոնց վրա 6 և ավելի տարի ցանք չի կատարվել:

«Վարելահող ընդամենը » /կող 60/ (57+58+59) տողում, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է նշված ժամանակահատվածում տնտեսության ընդամենը ցանքերի /կող 57/, բոլոր տեսակի ցելերի /կող 58/ և չօգտագործված վարելահողի / կող 59/ ընդամենը տարածությունների հանրագումարը:

«Մնկանոց, ընդամենը» /կող 61/ տողում լրացվում է այն ընդամենը տարածությունների (հատուկ սարքավորված շինություններ, նկուղներ և այլն) հանրագումարը, որոնց վրա աճեցվում են բոլոր (ցանկացած) տեսակի սունկ/սնկեր:

**Հարց 11. Բազմամյա տնկարկների տարածությունը
(տվյալ համայնքում/բնակավայրում, առանց վարձակալության
տրված հողերի, ներառյալ վարձակալված հողերում)**

առ 10.10.2020թ.

Հարցաթերթի տվյալ հարցում բազմամյա տնկարկների տարածությունների տվյալները ներառում են տնտեսության տվյալ համայնքում/բնակավայրում սեփական (առանց վարձակալության տրվածի) և վարձակալված (վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով) հողերի վրա առկա բազմամյա տնկարկների՝ պտղի և հատապտղի ու խաղողի տարածությունների հանրագումարները:

Այսպես, եթե տվյալ տեսակի (սորտի) բազմամյա տնկարկի տարածությունները գտնվում են մեկ կամ մի քանի հողակտորի վրա, անկախ նրանից՝ այդ հողակտորները գտնվում են տվյալ համայնքի նույն, թե այլ բնակավայրերում, ապա տվյալ տեսակի (սորտի) տարածության վերաբերյալ տվյալը պետք է ներառի բոլոր հողակտորների վրա առկա տարածությունների հանրագումարը:

Տնկարանը պտղի, հատապտղի, խաղողի (անկախ տեսակից ու սորտից) և դեկորատիվ ծառերի տնկանյութ (տնկիներ, վազեր, սածիլներ) աճեցնելու նպատակով օգտագործվող հողի տարածությունն է:

Աղյուսակ 4-ի «Հողեր դաշտում» հատվածի 1-ին՝ «Ընդամենը» սյունակում, ըստ համապատասխան տողերի, լրացվում են տնտեսության տվյալ համայնքի դաշտում գտնվող բազմամյա տնկարկների (բերքատու և նոր հիմնված) տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

Աղյուսակ 4-ի 2-րդ՝ «որից՝ փաստացի ռոռզված» սյունակի համապատասխան տողերում «Ընդամենը» սյունակի համապատասխան տողերից առանձնացվում են այն

տարածությունները, որոնք նշված ժամանակահատվածում փաստացի ոռոգվել են:

Աղյուսակ 4-ի 3-րդ՝ **«Բերքատու հասակի»**, սյունակում, ըստ համապատասխան տողերի, տնտեսության **տվյալ համայնքի դաշտում** գտնվող բազմամյա տնկարկների տարածություններից առանձնացվում են բերքատու հասակի տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

Աղյուսակի 4-րդ՝ **«որից՝ փաստացի ոռոգված»** սյունակի համապատասխան տողերում առանձնացվում են **«Բերքատու հասակի»** սյունակի համապատասխան տողերից այն տարածությունները, որոնք նշված ժամանակահատվածում փաստացի ոռոգվել են:

Փաստացի ոռոգված են համարվում այն տարածությունները, որոնք, անկախ նրանից՝ համարվում են ոռոգվող, թե ոչ, հաշվետու ժամանակահատվածում ոռոգվել են ցանկացած աղբյուրից (ոռոգման ցանցերից, արտեզյան ջրերով, տարածքին մոտ գտնվող գետերի, լճերի ջրերից և այլն) ու եղանակով (անձրևացման, կաթիլային, մարգերով և այլն):

Միայն բնական եղանակով՝ անձրևներով և այլ բնական տեղումներով ոռոգվող հողերը չեն ընդգրկվում փաստացի ոռոգված հողերի մեջ:

Աղյուսակ 4-ի **«Տնամերձ հողեր»** հատվածի **«Ծառերի/վազերի քանակը»** բաժնի **«Ընդամենը, հատ»**՝ 5-րդ և **«որից՝ բերքատու հասակի»** 6-րդ սյունակներում, ըստ համապատասխան տողերի, լրացվում են տնտեսության **տնամերձ հողի** վրա առկա պտղատու ծառերի/վազերի քանակը հատերով (անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում):

«Տնամերձ հողեր» հատվածի 7-րդ՝ **«Տարածությունը, մ²»** սյունակում, ըստ աղյուսակ 4-ի համապատասխան տողերով պահանջվող տեղեկատվության, լրացվում են տնտեսության

տնամերձ հողի այն մակերեսները (u^2), որոնց վրա առկա են հատապտղանոց՝ անկախ նրանից՝ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում, և խաղողի, պտղի և հատապտղի տնկարանների տարածությունները:

«Պտղատու այգի (առանց տնկարանի)» հատվածի հարցաթերթում բերված պտղատեսակներին (խնձոր, տանձ, սերկևիլ, ծիրան, դեղձ, կեռաս, սալոր, բալ, հոն, ընկույզ, տխիլ, թուզ, նուռ, արքայանարինջ, թուխ և այլն) համապատասխանող տողերը, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

հարցաթերթում բերված **պտղի /կողեր 62; 63;...76/** յուրաքանչյուր պտղատեսակին համապատասխանող տողում լրացվում է տվյալ պտղատեսակի բոլոր տեսակների (սորտերի), տնկարկների (անկախ նրանից՝ գտնվում են նրանք բերքատու հասակում, թե ոչ) ընդամենը տարածությունների հանրագումարն՝ ըստ աղյուսակի համապատասխան սյունակներով պահանջվող տեղեկատվության:

«Այլ» /կող 77/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հարցաթերթում չնշված այլ պտղատեսակների բոլոր տեսակների (սորտերի), տնկարկների ընդամենը տարածությունների հանրագումարները:

«Պտղատու այգի (առանց տնկարանի), ընդամենը» /կող 78/ (62+...+77) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է աղյուսակ 4-ի սյունակներով պահանջվող տեղեկատվության հանրագումարը:

«Պտղի տնկարան» /կող 79/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակների և սորտերի պտուղների տնկիների աճեցման համար օգտագործվող տարածությունների հանրագումարը:

«Զօգտագործված պտղատու այգիների տարածություններ» /կող 80/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է տնտեսության սեփական (առանց

վարձակալության տրված) և վարձակալված (վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով) այն պտղատու այգիների տարածությունների հանրագումարը, որի վրա նշված ժամանակահատվածում տնտեսության կողմից չի իրականացվել ագրոտեխնիկական ոչ մի միջոցառում՝ էտման, բուժման, ոռոգման, այգեմիջյան տարածությունների մշակման, բերքահավաքի և այլ աշխատանքներ:

«Պտղատու այգի, ընդամենը» /կող 81/ (78+79+80) տողում, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է նշված ժամանակահատվածում տնտեսության ընդամենը պտղատու այգիների /կող 78/, պտղի տնկարանի /կող 79/ և չօգտագործված պտղատու այգիների /կող 80/ ընդամենը տարածությունների հանրագումարը:

«Հատապտղանոց (առանց տնկարանի) (գետնամորի, ելակ, հաղարջ, մոշ և այլն)» /կող 82/ տողում, ըստ սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է գետնամորու, ելակի, հաղարջի, մոշի և այլ հատապտուղների տարածությունների հանրագումարը:

«Որից՝ ելակ» /կող 83/ տողում, ըստ սյունակներով պահանջվող տեղեկատվության, **«Հատապտղանոց (առանց տնկարանի) (գետնամորի, ելակ, հաղարջ, մոշ և այլն)» /կող 82/** տողում լրացված ցուցանիշից առանձնացվում և լրացվում է ելակի տարածության ցուցանիշը:

«Հատապտղի տնկարան» /կող 84/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակների և սորտերի հատապտուղների տնկիների (սածիլների) աճեցման համար օգտագործվող տարածությունների հանրագումարը:

«Հատապտղանոց, ընդամենը» /կող 85/ (82+84) տողում, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է նշված ժամանակահատվածում տնտեսության ընդամենը հատապտղանոցների /կող 82/ և հատապտղի

տնկարանի /կոդ 84/ ընդամենը տարածությունների հանրագումարը:

«Խաղողի այգի (առանց տնկարանի)» հատվածի հարցաթերթում բերված խաղողի բոլոր տեսակներին (սորտերին)՝ ըստ օգտագործման ուղղությունների, (տեխնիկական, սեղանի և ունիվերսալ) համապատասխանող տողերը, ըստ համապատասխան սյունակների, լրացվում են հետևյալ կերպ.

«Տեխնիկական» /կոդ 86/ տողում լրացվում է խաղողի բոլոր այն սորտերի (տեսակների) տնկարկների (անկախ նրանից՝ գտնվում են նրանք բերքատու հասակում, թե ոչ) ընդամենը տարածությունների հանրագումարն, ըստ համապատասխան սյունակների, որոնք համարվում են վերամշակման նպատակով օգտագործվող սորտեր (*Ռքածիթելի, Կանգուն, Արենի, Մեղրաբույր, Բանանց, Ոսկեհատ, Հաղթանակ, Գառան դմակ և այլն*)՝ անկախ նրանից, թե հաշվառման պահի դրությամբ (11.10.2020թ.) այդ տարածություններից հավաքված բերքն ինչ ուղղությամբ է օգտագործվել:

«Մեղանի» /կոդ 87/ տողում լրացվում է խաղողի բոլոր այն սորտերի (տեսակների) տնկարկների (անկախ նրանից՝ գտնվում են նրանք բերքատու հասակում, թե ոչ) ընդամենը տարածությունների հանրագումարն, ըստ համապատասխան սյունակների, որոնք համարվում են սննդի (պարենի) նպատակով օգտագործվող սորտեր (*Շահումյանի, Կարդինալ, Երևանի, Հայաստան, Արարատի, Հայրենիք և այլն*)՝ անկախ նրանից, թե հաշվառման պահի դրությամբ (11.10.2020թ.) այդ տարածություններից հավաքված բերքն ինչ ուղղությամբ է օգտագործվել:

«Ունիվերսալ» /կոդ 88/ տողում լրացվում է խաղողի բոլոր այն սորտերի (տեսակների) տնկարկների (անկախ նրանից՝ գտնվում են նրանք բերքատու հասակում, թե ոչ)

ընդամենը տարածությունների հանրագումարն, ըստ համապատասխան սյունակների, որոնք նախատեսվում են թե՛ սննդի (պարենի) և թե՛ վերամշակման համար (*Կահսեթ, Անահիտ, Մսիալի, Վան և այլն*)՝ անկախ նրանից, թե հաշվառման պահի դրությամբ (10.10.2020թ.) այդ տարածություններից հավաքված բերքն ինչ ուղղությամբ է օգտագործվել:

«Խաղողի այգի (առանց տնկարանի), ընդամենը» /կող 89/ (86+87+88) տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է աղյուսակ 4-ի սյունակներով պահանջվող տեղեկատվության հանրագումարը):

«Զօգտագործված խաղողի այգիների տարածություններ» /կող 90/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է տնտեսության սեփական (առանց վարձակալության տրված) և վարձակալված (վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով) այն խաղողի այգիների տարածությունների հանրագումարը, որի վրա նշված ժամանակահատվածում տնտեսության կողմից չի իրականացվել ագրոտեխնիկական ոչ մի միջոցառում՝ այգեբացի, էտման, բուժման, ոռոգման, այգեմիջյան տարածությունների մշակման, բերքահավաքի, այգեթաղի և այլ աշխատանքներ:

«Խաղողի տնկարան» /կող 91/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակների և սորտերի խաղողների տնկիների (մատերի) աճեցման համար օգտագործվող տարածությունների հանրագումարը:

«Խաղողի այգի, ընդամենը» /կող 92/ (89+90+91) տողում, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է նշված ժամանակահատվածում տնտեսության ընդամենը խաղողի այգիների /կող 89/, չօգտագործված

խաղողի այգիների /կող 90/ և խաղողի տնկարանի /կող 91/ ընդամենը տարածությունների հանրագումարը:

Ուշադրություն՝ ստորև բերվում է աղյուսակ, որտեղ տրամադրվում է տեղեկատվություն՝ պտղատեսակների և խաղողի լրիվ բերքատու տարիքի մեջ մտնելու ժամանակահատվածների վերաբերյալ
(ելնելով տվյալ տեսակի, սորտի տարբեր ժամանակահատվածներում պտղատու տարիքի մեջ մտնելու առանձնահատկություններից)

Պտղատեսակ	Լրիվ բերքատու հասակ մտնելու տարիք, տարեկան	Պտղատեսակ	Լրիվ բերքատու հասակ մտնելու տարիք, տարեկան
խնձորենի	5 – 6	կեռասենի	6 - 7
տանձենի	5 – 6	սալորենի	5 - 7
սերկնիլենի	5	բալենի	4 - 5
ծիրանենի	6 - 7	հոնի	4 - 5
դեղձենի	4 - 5	ընկուզենի	8 – 10
տիպլենի (պնդուկ)	4 – 5	նոնենի	4 - 5
նշենի	4 – 5	արքայանարնջենի (կարայլոկ)	4 - 5
ձիթենի	4 - 5	թթենի	7 - 8
թզենի	5	խաղողի վագ	4 - 5

«Բազմամյա տնկարկներ, ընդամենը» /կող 93/ (81+85+92) տողում, ըստ սյունակներով պահանջվող տեղեկատվության, լրացվում է տնտեսության բազմամյա տնկարկների՝ պտղատու այգիների /կող 81/, հատապտղանոցի /կող 85/ և խաղողի այգիների /կող 92/ տարածությունների հանրագումարը:

«Դեկորատիվ ծառերի տնկարաններ» /կող 94/ տողում, ըստ համապատասխան սյունակների, լրացվում է բոլոր տեսակների դեկորատիվ ծառերի տնկիների աճեցման համար օգտագործվող տարածությունների հանրագումարը:

Հարց 12. Փաստացի ոռոգված հողերի ոռոգման աղբյուրները և մեթոդները (տվյալ համայնքում/ բնակավայրում, առանց վարձակալության տրված հողերի, ներառյալ վարձակալված հողերում)
(01.08.2019թ. – 31.07.2020թ.)

Ընդհանուր տեղեկություններ հողերի ոռոգման աղբյուրների և մեթոդների վերաբերյալ

Ոռոգվող են համարվում այն հողերը, որոնք գտնվում են ոռոգման ցանցի տակ՝ անկախ նրանից՝ այն գործող է, թե ոչ:

Փաստացի ոռոգված են համարվում այն տարածությունները, որոնք, անկախ նրանից՝ համարվում են ոռոգվող, թե ոչ, ոռոգվել են ցանկացած աղբյուրից (ոռոգման ցանցերից, արտեզյան ջրերով, տարածքին մոտ գտնվող գետերի, լճերի ջրերից և այլն) ու եղանակով՝ արհեստական անձրևացման, կաթիլային, ակոսային և այլ:

Միայն բնական եղանակով՝ անձրևներով և այլ բնական տեղումներով ոռոգվող հողերը չեն ընդգրկվում փաստացի ոռոգված հողերի մեջ:

Հողերի ոռոգման **աղբյուրները** տարբեր են՝ ընդհանուր ոռոգման ցանցեր, տարածքին մոտ գտնվող գետեր, լճեր, առուներ, խորքային հորեր (արտեզյան ջրեր), հնարավոր է ոռոգել նաև խմելու ջրով և այլն:

Հողերի **ոռոգման մեթոդները** տարբեր են՝ **ակոսային** (մարզերի մեջ ջրով լցված ակոսներ, ջրի բաշխումը մարզերի մեջ ընկած ակոսների միջոցով), **արհեստական անձրևացում** (ըստ մշակաբույսերի տարածությունների ոռոգում բարձր ճնշման տակ անձրևի տեսքով), **կաթիլային** (մշակաբույսերի ոռոգում բույսի վրա ջրի կաթեցման միջոցով, ինչպես նաև մառախուղ առաջացնելու միջոցով):

Տնտեսությանը պատկանող հողերի **միայն փաստացի ոռոգման** աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ոռոգման աղբյուրի տեսակի լրացվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 5-ի Բ սյունակում թվարկված ոռոգման աղբյուրներից պատասխանողը ընտրում է այն աղբյուր(ներ)ը, որ(ոնց)ով տնտեսությունը **փաստացի ոռոգում** է իրեն պատկանող հողերը: Պատասխանողի կողմից նշված տող(եր)ին համապատասխանող վանդակներում հաշվարարը կատարում է (X) նշում: Կարող է լինել մեկից ավելի պատասխան:

Եթե տնտեսությունն իրեն պատկանող հողերը **փաստացի ոռոգում է** հարցաթերթում թվարկված ոռոգման աղբյուրներից բացի այլ աղբյուրով, ապա «Այլ» /կոդ 99/ տողում նշվում է տվյալ աղբյուրը և դրան համապատասխան 1-ին սյունակի վանդակում կատարվում է համապատասխան (X) նշում:

Նույն սկզբունքով լրացվում է նաև **աղյուսակ 6 -ի «Փաստացի ոռոգված հողերի ոռոգման մեթոդները»** հատվածը:

**ԲԱԺԻՆ IV. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ (ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ԵՎ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ)
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔ-
ՆԵՐՈՒՄ/ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ**

**Հարց 13. Տնտեսությունն ունի՞ (առ 10.10.2020թ.) և/կամ
մշակել է (01.08.2019-31.07.2020) հողեր (գյուղատնտեսական
նշանակության, տնամերձ և այլ հողեր) (սեփական,
վարձակալված)
այլ համայնքներում/բնակավայրերում**

Հարցի նպատակն է ճշտել՝ թե արդյոք տնտեսության
անդամներից որևէ մեկն ունի՞ և/կամ մշակել է (սեփական,
վարձակալված և այլ հիմունքով օգտագործվող) հողեր
(գյուղատնտեսական նշանակության, տնամերձ և այլ հողեր)
այլ համայնք(ներ)ում/բնակավայր(եր)ում:

Եթե այո, ապա համապատասխան վանդակում
հաշվարարը պետք է կատարի համապատասխան (X) նշումը և
տվյալ տնային տնտեսության համար լրացնի
**«Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ
հարցաթերթի հավելված»-ը:**

Ընդ որում, եթե տնտեսությունն ունի և/կամ մշակել է
հողեր մի քանի համայնք(ներ)ում/բնակավայր(եր)ում, ապա
լրացվում են նույնքան **1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածներ՝**
յուրաքանչյուր համայնքի/բնակավայրի համար:

Ուշադրություն՝ առկա է տրամաբանական կապ 1-ԳՀՀ
հարցաթերթի Բաժին II-ի **աղյուսակ 1-ի** 3-րդ սյունակում
կատարված գրառման և տվյալ հարցի «Այո» կամ «Ոչ»
պատասխանների միջև:

Եթե հարցվողը սույն հարցին տվել է դրական
պատասխան, այսինքն՝ նշել, որ տնտեսությունն ունի հողեր
այլ համայնքներում/բնակավայրերում, ապա հաշվարարը

պետք է համոզվի, որ տվյալ տնտեսության համար լրացվող հարցաթերթի Բաժին II-ի աղյուսակ 1-ի 3-րդ սյունակում կատարվել է համապատասխան գրառում (գրված է որևէ թիվ), իսկ եթե պատասխանողը նշել է, որ տնտեսությունը չունի հողեր այլ համայնքներում, ապա հաշվարարը պետք է համոզվի, որ Բաժին II-ի **աղյուսակ 1-ի 3-րդ սյունակի** համապատասխան տողերում նշված է «0»:

Ուշադրություն՝ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի հավելված»-ի տնտեսությանը պատկանող հողերի և մշակաբույսերի ցանքատարածությունների ու բազմամյա տնկարկների տարածությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նույն սկզբունքով, ինչպես **1-ԳՀՀ հարցաթերթի** համապատասխան աղյուսակները:

Եթե հաշվարարի կողմից լրացվել է հավելված, ապա դրա լրացումից հետո հաշվարարը պետք է շարունակի հարցումը տվյալ տնտեսության անդամի հետ և շարունակի տվյալ տնտեսության համար 1-ԳՀՀ հարցաթերթի լրացումը **V-րդ բաժնից**:

13-րդ հարցին «Ոչ» պատասխանելու դեպքում հաշվարարը շարունակում է հարցումը և հարցաթերթը շարունակում լրացնել **V-րդ բաժնից**:

Ուշադրություն՝ V-րդ բաժնից սկսած հարցաթերթում տնտեսությանը վերաբերող լրացվող տվյալները պետք է ներառեն նաև տնտեսության այլ համայնքների/բնակավայրերի վերաբերյալ ցուցանիշները:

**ԲԱԺԻՆ V. ԲՈՒՑՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ**

(ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում)

Ընդհանուր տեղեկություններ բույսերի պաշտպանության և պարարտացման միջոցների վերաբերյալ

Բուժանյութերն ու թունաքիմիկատները ներառում են հերքիցիդներ՝ քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են մոլախոտերի վերացման համար, ինսեկտիցիդներ՝ քիմիական նյութեր, որոնք նախատեսված են վնասակար միջատների, որդերի, նրանց թրթուրների ու ձվերի ոչնչացման համար, ֆունգիցիդներ՝ քիմիական նյութեր, որոնք նախատեսված են տարբեր տեսակի հիվանդություններ հարուցող սնկերի, բակտերիաների, սպորների և այլնի զարգացման կանխման և ոչնչացման համար, բույսերի կենսաբանական պաշտպանության միջոցներ՝ կենսաբանական մարմիններ, որոնք իրենց գործունեության ընթացքում ձևավորում են այնպիսի կայուն կենսաբանական միջավայր, որը միտված է գյուղատնտեսական մշակաբույսի համար առավել նպաստավոր (վնասատուներից զերծ) զարգացմանը:

Բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցները բույսերի վնասակար օրգանիզմների կանխարգելման, դրանց դեմ պայքարի և վերացման համար կիրառվող կենսաբանական միջոցներն (միջատներ, սնկեր, բացիլներ, ֆերոմոնային թակարդներ և այլն) են:

Հանքային պարարտանյութերը ներառում են ազոտական՝ ամոնիակային սելիտրա, կարբամիդ և այլն, ֆոսֆորական, կալիական, կոմբինացված՝ նիտրոամոֆոսկա, ամոֆոս և այլ պարարտանյութեր:

Օրգանական պարարտանյութերը ներառում են բոլոր տեսակի կենդանիների և թռչունների զոմաղբը և օրգանական ծագմամբ այլ նյութեր՝ ցանկացած տեսքով:

**Հարց 14. Օգտագործված բուժանյութեր և թունաքիմիկատներ,
պարարտանյութեր
(01.08.2019թ. – 31.07.2020թ.)**

Աղյուսակի 7-ի 1-ին՝ «Մակերեսը, հա» սյունակում, ըստ համապատասխան տողերի, լրացվում են այն հողերի (*վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողեր*) ընդհանուր տարածությունները (ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում գտնվող հողերը) 0.00 հա ճշտությամբ, որոնց վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ընթացքում տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում **օգտագործվել են բուժանյութեր և թունաքիմիկատներ, բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ, հանքային և օրգանական պարարտանյութեր** (անկախ դրանց օգտագործման քանակից և հաճախականությունից):

Աղյուսակ 7-ի 2-րդ՝ «Քանակը (ֆիզիկական քառով), տոննա» սյունակում, ըստ պահանջվող տեղեկատվության, լրացվում են նշված ժամանակահատվածում տնտեսության կողմից օգտագործված հանքային և օրգանական պարարտանյութերի ընդամենը քանակը՝ 0.00 ճշտությամբ:

«Բուժանյութեր և թունաքիմիկատներ» /կոդ 01/ տողում, ըստ 1-ին սյունակի, լրացվում են այն հողերի (*վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողեր*) ընդհանուր տարածությունը (ներառյալ այլ համայնքներում գտնվող հողերը) 0.00 հա ճշտությամբ, որոնց վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ընթացքում տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործվել են **բուժանյութեր և թունաքիմիկատներ:**

«Բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ» /կող 02/ տողում, ըստ 1-ին սյունակի, լրացվում են այն հողերի (*վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողեր*) ընդհանուր տարածությունը (ներառյալ այլ համայնքներում գտնվող հողերը) 0.00 հա ճշտությամբ, որոնց վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ընթացքում տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործվել են բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ:

«Հանքային (ազոտական, ֆոսֆորական, կալիումական և այլ) պարարտանյութեր» /կող 03/ տողում, ըստ 1-ին սյունակի, լրացվում են այն հողերի (*վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողեր*) ընդհանուր տարածությունը (ներառյալ այլ համայնքներում գտնվող հողերը) 0.00 հա ճշտությամբ, որոնց վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ընթացքում տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործվել են հանքային պարարտանյութեր: 2-րդ սյունակում լրացվում են տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործված հանքային պարարտանյութերի ընդամենը քանակը, ֆիզիկական քաշով՝ 0.00 տոննա ճշտությամբ:

«Օրգանական պարարտանյութեր» /կող 04/ տողում, ըստ 1-ին սյունակի, լրացվում են այն հողերի (*վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողեր*) ընդհանուր տարածությունը (ներառյալ այլ համայնքներում գտնվող հողերը) 0.00 հա ճշտությամբ, որոնց վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ընթացքում տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործվել են օրգանական պարարտանյութեր: Ըստ 2-րդ սյունակի լրացվում են

տնտեսության կողմից նշված ժամանակահատվածում օգտագործված օրգանական պարարտանյութերի ընդամենը քանակը՝ ֆիզիկական քաշով (0.00 տոննա ճշտությամբ):

ԲԱԺԻՆ VI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐ ԵՎ ԹՈՂՈՒՆՆԵՐ

Հարց 15. Գյուղատնտեսական կենդանիների և թռչունների քանակը (ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում) առ 10.10.2020թ.

Հարցաթերթի այս բաժնում ներառվում է գյուղատնտեսական կենդանիների և թռչունների այն գլխաքանակը, որը նախատեսված է անասնաբուժական մթերք (միս, կաթ, ձու, բուրդ, մեղր և այլն) ստանալու, վերարտադրության (ծնի), բտման (քաշաճի), վաճառքի, գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու, գիտական և այլ նպատակների համար, որոնք առկա են տնտեսությունում 10.10.2020թ. դրությամբ:

Աղյուսակ 8-ի 1-ին՝ «Գլուխ» սյունակի համապատասխան տողերում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ, ինչպես հիմնական բնակության վայր համարվող համայնքում/բնակավայրում, այնպես էլ այլ համայնքներում/բնակավայրերում տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների և թռչունների (համաձայն հարցաթերթում բերված տեսակների և ըստ նշված սեռատարիքային խմբերի) ընդամենը գլխաքանակը:

Հարցաթերթում բերված **խոշոր եղջերավոր կենդանիների** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«կովեր» /կող 01/ - առնվազն մեկ անգամ ծնած տավարի բոլոր ցեղերի սեռահասուն էգ կենդանի,

«որից՝ կաթնային հոտի» /կող 02/ - կաթ ստանալու համար բուծվող կովեր,

«արտադրող ցույեր» /կող 03/ - 1,5 տարեկանից բարձր տավարի արու կենդանիներ, որոնք նախատեսված են վերարտադրություն ապահովելու համար,

«երինջներ 2 տարեկանից բարձր» /կող 04/ - հղի էգ հորթեր՝ 2 տարեկանից բարձր,

«ցլիկներ 2 տարեկանից բարձր» /կող 05/ - տավարի արու հորթեր՝ 2 տարեկանից բարձր,

«մոզիներ 1-ից մինչև 2 տարեկան» /կող 06/ - տավարի 1-ից մինչև 2 տարեկան հորթեր,

«այլ խոշոր եղջերավոր կենդանիներ, ներառյալ մատղաշներ» /կող 07/ տողում լրացվում է 10.10.2019թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակների հանրագումարը:

«Խոշոր եղջերավոր կենդանիներ, ընդամենը» /կող 08/ (01+03+04+05+06+07) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **գումեշների** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մատակներ» /կող 09/ - գումեշի սեռահասուն էգ կենդանի,

«գումշացույեր» /կող 10/ - գումեշի սեռահասուն արու կենդանի, որն օգտագործվում է վերարտադրության նպատակով,

«այլ գումեշներ, ներառյալ մատղաշներ» /կող 11/ տողում համապատասխանաբար լրացվում է 10.10.2020թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված գումեշների գլխաքանակների հանրագումարը:

«Գումեշներ, ընդամենը » /կող 12/ (09+10+11) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ գումեշների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **խոզերի** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մայր խոզեր հիմնական հոտի» /կող 13/ - 2 և ավելի անգամ ծնած մայրեր,

«էգ խոզեր կազմալրման համար՝ 4-ից մինչև 12 ամսական» /կող 14 տողում լրացվում է տվյալ սեռատարիքային խմբին պատկանող անասունների ընդամենը գլխաքանակը:

Խոզեր (բացառելով 13 և 14 կողերում նշված գլխաքանակները), մինչև 20 կգ (կենդանի քաշով)/կող 15/, 20-ից մինչև 50 կգ (կենդանի քաշով)/կող 16/, 50 կգ-ից ավելի (կենդանի քաշով) /կող 17/ տողերում, համապատասխանաբար, լրացվում են 10.10.2020թ. դրությամբ նշված քաշային խմբերին պատկանող խոզերի ընդամենը գլխաքանակները:

«Խոզեր, ընդամենը» /կող 18/ (13+14+15+16+17) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ խոզերի բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **բոլոր ցեղերի ոչխարների** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մաքիներ» /կող 19/ - շիշակներ, որոնք ծնել են և դարձել մայր,

«խոյեր» /կող 20/ - 1,5 տարեկանից բարձր արու ոչխարներ, որոնք օգտագործվում են վերարտադրության նպատակով,

«շիշակներ» /կող 21/ - 1-1,5 տարեկան հղի էգ գառներ,

«այլ ոչխարներ, ներառյալ գառներ» /կող 22/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված բոլոր ցեղերի ոչխարների գլխաքանակների հանրագումարը:

«Ոչխարներ, ընդամենը» /կող 23/ (19+20+21+22) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ բոլոր ցեղերի ոչխարների սեռատարիքային խմբերին պատկանող ընդամենը ոչխարների գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **այծերի** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մայր այծեր» /կող 24/ - ներիներ (շիշակներ), որոնք ծնել են և դարձել մայր,

«նոխագներ»/կող 25/ - արու այծեր, որոնք ծածկում են մայրերին, որոնք օգտագործվում են վերարտադրության նպատակով,

«ներիներ (շիշակներ) » /կող 26/- 1-1,5 տարեկան հղի էգ այծեր,

«այլ այծեր, ներառյալ ուլեր» /կող 27/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված այծերի գլխաքանակների հանրագումարը:

«Այծեր, ընդամենը» /կող 28/ (24+25+26+27) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ այծերի բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **բոլոր ցեղերի ձիերի** սեռատարիքային խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«գամբիկներ 3 տարեկան և ավելի» /կող 29/ - վերարտադրության համար պիտանի էգ ձիեր,

«հովատակներ» /կող 30/ - սեռահասուն արու ձիեր, որոնց օգտագործում են վերարտադրության նպատակով,

«մտրուկներ» /կող 31/ - 1 տարեկան մատղաշ քուռակ՝ էգ կամ արու,

«այլ ձիեր, ներառյալ քուռակներ» /կող 32/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված բոլոր ցեղերի ձիերի գլխաքանակների հանրագումարը:

«Ձիեր, ընդամենը» /կող 33/ (29+30+31+32) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ ձիերի բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

«Ավանակներ, ընդամենը»/կող 34/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ ավանակների ընդամենը գլխաքանակը:

«Ջորիներ, ընդամենը» /կող 35/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ ջորիների ընդամենը գլխաքանակը:

Հարցաթերթում բերված **բոլոր տեսակի և հասակի ճագարների** խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մայր ճագարներ» /կող 36/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ մայր ճագարների ընդամենը գլխաքանակը,

«այլ ճագարներ» /կող 37/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ ճագարների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը՝ բացառելով մայր ճագարների գլխաքանակը:

«ճագարներ, ընդամենը» /կող 38/ (36+37) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ ճագարների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **բոլոր տեսակի և հասակի թռչունների** խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«ածան հավեր» /կող 39/, «այլ հավեր, ներառյալ մատղաշներ» /կող 40/, «բրոյլերներ» (մաստու ուղղութեան հավեր) /կող 41/, «հնդկահավեր» /կող 42/, «սագեր» /կող 43/, «բաղեր» /կող 44/, «խայտահավեր» /կող 45/, «ջայլամներ» /կող 46/ տողերում լրացվում են նշված թռչնատեսակների ընդամենը գլխաքանակները:

«Այլ թռչուններ» /կող 47/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ հարցաթերթի սույն բաժնում չթվարկված թռչունների (աքլոր, լոր և այլն) գլխաքանակների հանրագումարը:

«Թռչուններ, ընդամենը» /կող 48/ (39+40+41+42+43+44+45+46+47) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ բոլոր տեսակի և հասակի թռչունների խմբերին պատկանող թռչունների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

Հարցաթերթում բերված **բոլոր տեսակի և հասակի մորթատու գազանների** խմբերին համապատասխանող տողերը լրացվում են հետևյալ կերպ.

«մայր գազաններ» /կող 49/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ մայր գազանների խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակը,

«այլ գազաններ» /կող 50/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ մորթատու գազանների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը՝ բացառելով մայր գազանների գլխաքանակը:

«Մորթատու գազաններ, ընդամենը» /կող 51/ (49+50) տողում, ըստ թիվ 1 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ մորթատու գազանների բոլոր սեռատարիքային խմբերին պատկանող կենդանիների ընդամենը գլխաքանակների հանրագումարը:

«Մեղվարնտանիքներ» /կող 52/ տողում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ մեղր արտադրելու համար նախատեսված մեղվարնտանիքների (փեթակների) հանրագումարը:

ԲԱԺԻՆ VII. ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ ձկնաբուծության վերաբերյալ

Ձկնաբուծությունը ձկնաբուծարանների և ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամեղրատիվ աշխատանքների իրականացմամբ, ձկների, նորածին մանրաձկների, մանր ծովախեցգետինների արտադրության, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրության և աճեցման գործունեության հետ կապված ծառայություններն են:

Հարց 16. Տնտեսությունը զբաղվե՞լ է ձկնաբուծությամբ (01.08.2019թ. – 31.07.2020թ.)

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը զբաղվում է ձկնաբուծությամբ՝ անկախ արտադրված ձկան/ծովամթերքի քանակից և ջրային տարածքի մակերեսից, որտեղ արտադրվել է ձուկը/ծովամթերքը) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը չի զբաղվում ձկնաբուծությամբ) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

«Այո» պատասխանի դեպքում անհրաժեշտ է նաև հարցաթերթի 16.1՝ «Ջրավազանի մակերեսը, մ²» առանձնացված տողում գրել ջրավազանի (եթե առկա են մի քանի ջրավազաններ, ապա հարկ է նշել դրանց ընդհանուր մակերեսը) մակերեսի չափը, իսկ 16.2՝ «Ջրաղբյուրները» տողի համապատասխան վանդակում/վանդակներում կատարել

համապատասխան նշում/նշումներ (X), **ջրօգտագործման աղբյուրների վերաբերյալ** ստորգետնյա և/կամ մակերևութային:

Ուշադրություն.

ստորգետնյա ջրաղբյուրներ են համարվում այն ջրերը (արտեզյան, գրունտային, բնաղբյուր), որոնք գտնվում են երկրակեղևը կազմող ապարների մեջ հեղուկ կամ գոլորշի կամ կարծր վիճակում, իսկ մակերևութային ջրօգտագործման աղբյուրներն են՝ գետերը, լճերը, լճակները, առուները, գերխոնավ տարածքները, ձնածածկույթները, սառցադաշտերը, որոնք հոսում կամ հավաքվում են երկրի մակերևույթի վրա:

ԲԱԺԻՆ VIII. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

(ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում)

**Հարց 17. Շենք/շինություններ գյուղատնտեսական կենդանիներ ու թռչուններ պահելու և գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար
առ 10.10.2020թ.**

Բաժնում լրացվում է 10.10.2020թ. դրությամբ տնտեսությունում առկա գյուղատնտեսական կենդանիներ (ցանկացած տեսակի և տարիքի) ու թռչուններ պահելու համար նախատեսված գյուղատնտեսական նշանակության բոլոր շենքերի և շինությունների (միաժամանակ պահպանելով անասնաբուծության վարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները. կերակրում, խնամք, գոռհիգիենա՝ սանիտարական, օդափոխության, ջերմաստիճանի, խոնավության, կերերի, ջրերի և այլնի սանիտարահիգիենիկ պահանջների պահպանում)՝ անկախ նրանից՝ առ 10.10.2020թ.

դրությամբ այնտեղ պահվում/պահվել է անասուն, թե ոչ, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանք (ցանկացած տեսակի) պահպանելու համար նախատեսված **շինությունների մակերեսները** (տնտեսությանը սեփականության իրավունքով պատկանող և վարձակալված՝ վճարովի, ոչ վճարովի և այլ հիմունքներով)՝ ըստ **աղյուսակ 9-ում** բերված առանձին տողերի՝ համապատասխան սյունակներով:

Աղյուսակ 9-ի «Պահեստարաններ և ծածկեր» /կող 01/ ու «Սառնարաններ» /կող 02/ տողերում լրացվում են **10.10.2020թ.** դրությամբ տնտեսությունում առկա գյուղատնտեսական արտադրանք (ցանկացած տեսակի) պահելու համար նախատեսված (պիտանի) շենքեր/շինությունների ընդհանուր ծավալների չափերի վերաբերյալ տեղեկատվությունը:

«Պահեստարաններ և ծածկեր» /կող 01/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է **10.10.2020թ.** դրությամբ գյուղատնտեսական (ցանկացած տեսակի) արտադրանք պահելու համար նախատեսված (պիտանի) շենքեր/շինությունների ընդհանուր ծավալի չափը՝ անկախ նրանից՝ հարցման պահին այնտեղ պահվում է արտադրանք, թե ոչ: Եթե առկա են մեկից ավելի պահեստարաններ և ծածկեր, ապա պետք է համապատասխան տողում նշվի դրանց ծավալների հանրագումարը:

Պահեստարանը *գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար նախատեսված համապատասխան պայմաններ ունեցող (խոնավություն, ջերմություն, լուսավորություն և այլն) տարածք կամ շինություն է:*

Ծածկը *տարածք է, որն ունի վերին ծածկույթ, իսկ կողային հատվածները կարող են առանձնացված լինել ցանկացած նյութով, բացառելով փայտ և քար:*

«Սառնարաններ» /կող 02/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է **10.10.2020թ.** դրությամբ գյուղատնտեսական

(ցանկացած տեսակի) արտադրանք պահելու համար նախատեսված (պիտանի) սառնարանի ընդհանուր ծավալի չափը՝ անկախ նրանից՝ հարցման պահին այնտեղ պահվում է արտադրանք, թե ոչ: Եթե առկա են մեկից ավելի սառնարաններ, ապա պետք է համապատասխան տողում նշվի դրանց ծավալների հանրագումարը:

Սառնարանը *գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար նախատեսված համապատասխան սարքավորումներով կահավորված տարածք կամ շինություն է՝ անհրաժեշտ (ըստ պահանջի) ջերմաստիճան ապահովելու հնարավորությամբ:*

«Խոշոր եղջերավոր կենդանիների համար» /կոդ 03/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ խոշոր եղջերավոր (ցանկացած տեսակի և տարիքի) կենդանիներ պահելու համար նախատեսված տվյալ շենք/շինության ընդհանուր մակերեսի չափը՝ անկախ նրանից՝ 10.10.2020թ. դրությամբ այնտեղ պահվում/պահվել է կենդանի, թե ոչ:

«Խոզանոցներ» /կոդ 04/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ խոզեր (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված տվյալ շենք/շինության ընդհանուր մակերեսի չափը՝ անկախ նրանից՝ 10.10.2020թ. դրությամբ տվյալ շենք/շինությունում պահվում/պահվել է խոզ, թե ոչ:

«Ոչխարանոցներ» /կոդ 05/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է 09.11.2020թ. դրությամբ ոչխարներ (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված տվյալ շենք/շինության ընդհանուր մակերեսի չափը՝ անկախ նրանից՝ 10.10.2020թ. դրությամբ տվյալ շենք/շինությունում պահվում/պահվել է ոչխար, թե ոչ:

«Թռչնանոցներ» /կոդ 06/ տողում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ թռչուններ (ցանկացած

տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված տվյալ շենք/շինության ընդհանուր մակերեսի չափը՝ անկախ նրանից՝ 10.10.2020թ. դրությամբ տվյալ շենք/շինությունում պահվում/պահվել է թռչուն, թե ոչ:

«Այլ կենդանիների համար» /կողեր 07, 08, 09/ տողերում, ըստ թիվ 2 սյունակի, լրացվում են 10.10.2020թ. դրությամբ վերը չթվարկված մյուս բոլոր գյուղատնտեսական կենդանիներ (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված շենքերի/շինությունների ընդհանուր մակերեսների չափերը, ըստ հարցվողի կողմից նշվող անասնատեսակների՝ անկախ նրանից՝ 10.10.2020թ. դրությամբ տվյալ շենքերում/շինություններում պահվում/պահվել են կենդանիներ, թե ոչ:

Եթե հարցվողը նշում է, որ տվյալ շենք/շինությունում պահվում/պահվել են տարբեր անասնատեսակներ, ապա աղյուսակի լրացման ժամանակ հարցվողն ինքը պետք է նշի, թե որ անասնատեսակը պահելու համար է տվյալ շինությունը ի սկզբանե նախատեսված, և շինության մակերեսի չափի մասին նշումը կատարվի համապատասխան տողում՝ անկախ նրանից՝ այնտեղ տվյալ պահին պահվում են տարբեր անասնատեսակներ, թե ոչ:

Հարց 18. Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների պահպանման համար շենքեր/շինությունների առկայությունը առ 10.10.2020թ.

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունում 10.10.2020թ. դրությամբ առկա են շենքեր/շինություններ տեխնիկայի և սարքավորումների պահպանման համար) կամ «Ոչ» (եթե տնտեսությունում 10.10.2020թ. դրությամբ առկա չեն շենքեր/շինություններ տեխնիկայի և սարքավորումների պահպանման համար) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

Հարց 19. Գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ
(կարող է լինել մեկից ավելի պատասխան)

Աղյուսակ 10-ի 1-ին՝ «Սեփական տեխնիկա/սարքավորում սարքին վիճակում, ընդամենը, հատ» սյունակում, ըստ համապատասխան տողերի, լրացվում են 10.10.2020թ. դրությամբ տնտեսության սեփականություն հանդիսացող և սարքին վիճակում գտնվող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների (համաձայն հարցաթերթում բերված տեսակների) ընդամենը քանակները՝ անկախ դրանց տարիքից և հարցման պահին գտնվելու վայրից:

Սարքին է համարվում գյուղատնտեսական այն տեխնիկան/սարքավորումը, որը հարցման պահին գտնվում է աշխատունակ վիճակում, կամ առկա անսարքությունը (կապված չէ հիմնական հանգույցների հետ՝ շարժիչ, փոխանցման տուփ, առջևի և հետևի կամրջակներ ու այլ անսարքություններ, որոնց վերացումը պահանջում է

հանգույցների փոխանակում կամ նորոգում) հնարավոր է վերացնել կարճ ժամկետում և չնչին ներդրումներով:

Աղյուսակ 10-ի «Օգտագործել էք գյուղատնտեսական տեխնիկա/սարքավորում» հատվածին վերաբերող տվյալները լրացվում են **01.08.2019թ. – 31.07.2020թ.** ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 10-ի 2-րդ սյունակում, ըստ համապատասխան տողերի, նշում **(X)** կատարվում է այն **սեփական** գյուղատնտեսական տեխնիկային կամ սարքավորմանը համապատասխանող վանդակում, որը նշված ժամանակահատվածում օգտագործվել է տնտեսության կողմից:

Աղյուսակ 10-ի 3-րդ սյունակում, ըստ համապատասխան տողերի, նշում **(X)** կատարվում է այն գյուղատնտեսական տեխնիկային կամ սարքավորմանը համապատասխանող վանդակում, որը նշված ժամանակահատվածում տնտեսության կողմից վարձակալվել է *առանց սպասարկող անձնակազմի*, վճարովի, ոչ վճարովի կամ այլ հիմունքներով:

Կարող են նշված լինել մի քանի վանդակներ, քանի որ հնարավոր է նշված ժամանակահատվածում տնտեսության կողմից օգտագործված լինեն տարբեր սարքավորումներ կամ տեխնիկա:

Աղյուսակ 10-ի 4-րդ սյունակում, ըստ համապատասխան տողերի, նշում **(X)** կատարվում է այն գյուղատնտեսական տեխնիկային կամ սարքավորմանը համապատասխանող վանդակում, որից նշված ժամանակահատվածում օգտվել է տնտեսությունը՝ **գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ծառայություններ մատուցողից՝ տեխնիկան վարձվել է համապատասխան աշխատանքները կատարող անձանց հետ միասին:**

«Թրթուրավոր տրակտորներ» /կող 10/ տողում, ըստ 1-ին սյունակի, լրացվում է 10.10.2020թ. դրությամբ տնտեսության սեփականություն հանդիսացող, սարքին վիճակում գտնվող բոլոր մակնիշների թրթուրավոր տրակտորների ընդհանուր քանակը:

Տնտեսության կողմից թրթուրավոր **տրակտորների** (ներառյալ այն տրակտորները, որոնց վրա մոնտաժված են բուլդոզերներ, սկրեպերներ, հողահաններ, առու փորողներ, ոռոգման մեքենաներ, հողի մաքրման մեքենաներ և այլն) **օգտագործման** դեպքում **աղյուսակ 10-ի** 2-րդ և 3-րդ սյունակների վանդակներում կատարվում է համապատասխան X նշում, իսկ 4-րդ սյունակի համապատասխան տողի վանդակում նշում կկատարվի այն դեպքում, եթե տնտեսությունն օգտված լինի գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ծառայություն մատուցողից:

Նույն կարգով լրացվում են նաև **«Անվավոր տրակտորների» /կող 11/** վերաբերյալ տվյալները:

Նույն կարգով լրացվում են նաև **«Բեռնատար ավտոմեքենաների»** (ներառյալ ավտոցիստեռների (բենզին, կաթ և այլն փոխադրող)) **/կող 12/ վերաբերյալ տվյալները:**

Այս տողում չեն լրացվում հատուկ հարմարանքներով (ավտոբենզին լիցքավորող, ամբարձիչներով) ավտոմեքենաներին վերաբերող տվյալները:

Նույն կարգով լրացվում են նաև բոլոր տեսակների **հացահատիկահավաք կոմբայնների /կող 13/** վերաբերյալ տվյալները:

Բոլոր տեսակների **կերահավաք կոմբայնների** (ներառյալ սիլոսահավաք) **/կող 14/ և խոտհնձիչների** (տրակտորային կցովի, կախովի և կիսակախովի՝ խոտ, կանաչ կեր, սիլոս, եզիպտացորեն, արևածաղիկ և խոտաբույսեր հնձելու համար նախատեսված խոտհնձիչների)՝ ներառյալ հնձիչ

մանրացնողների և հնձիչ տափակեցնողների /կոդ 15/ վերաբերյալ տվյալները ևս լրացվում են նույն կարգով:

Տրակտորային կցասայլակների /կոդ 16/, հավաքիչ մամլիչների /կոդ 17/, հատիկագտիչ մեքենաների /կոդ 18/, շարքացանների /կոդ 19/, գուրթանների /կոդ 20/, կուլտիվատորների (բացառելով հարթակտրիչները և խորը փխրեցնողները) /կոդ 21/ և տրակտորային սրակիչների /կոդ 22/ բոլոր տեսակների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են վերը նշված կարգով:

«Կաթի պահպանման սառնարանային սարքավորումներին» /կոդ 23/ և «Կաթ վերամշակող սարքավորումներին» /կոդ 24/ համապատասխանող տողերում ըստ 1-ին սյունակի լրացվում է 10.10.2020թ. դրությամբ տնտեսության սեփականություն հանդիսացող, սարքին վիճակում գտնվող նշված սարքավորումների ընդհանուր քանակը: Դրանց օգտագործման դեպքում աղյուսակ 10-ի համապատասխան տողերի 2-րդ և 3-րդ սյունակների վանդակներում կատարվում է համապատասխան (X) նշում, իսկ 4-րդ սյունակի համապատասխան տողի վանդակում նշում կկատարվի այն դեպքում, եթե տնտեսությունն օգտված լինի վերոնշյալ սարքավորումների օգտագործման ծառայություն մատուցողից:

Տնտեսությունում, բացի վերը թվարկվածներից, այլ գյուղատնտեսական տեխնիկայի կամ սարքավորման առկայության դեպքում «Այլ (նշել)» /կոդ 25/ տողում նախ անհրաժեշտ է նշել գյուղատնտեսական տեխնիկայի կամ սարքավորման անունը/տեսակը (ոռոգման համար մեքենաներ և հատուկ սարքեր, պարարտացման և սրակման համար նախատեսված մեքենաներ և այլ գյուղատնտեսական տեխնիկա ու սարքավորումներ), այնուհետև ըստ համապատասխան սյունակների լրացնել պահանջվող տեղեկատվությունը՝ վերոնշյալ սկզբունքով:

Հարց 20. Տնտեսությունը օգտագործել է ձի կամ այլ կենդանի քանող ուժ գյուղատնտեսական աշխատանքների համար (01.08.2019թ. – 31.07.2020թ.)

Հարցի պատասխանը լրացնելու համար անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը գյուղատնտեսական աշխատանքներում (վար, ցանք և այլն) կենդանի քանող ուժ է օգտագործել՝ անկախ օգտագործված կենդանու տեսակից) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը չի օգտագործել) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

ԲԱԺԻՆ IX. ԱՇԽԱՏՈՒԺ

(ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում)

Հարց 21. Տնտեսության գլխավորի/անդամների (15 տարեկան և բարձր) սեռը, տարիքը, կրթությունը և տնտեսությունում գյուղատնտեսությամբ զբաղվածությունը (11.10.2019թ. – 10.10.2020թ.)

Բաժնում լրացվում են հարցման պահին տնտեսության անդամների՝ *ներառելով հարցման պահին տնտեսության բացակա անդամներին* (բացակայում է տնտեսությունից, համայնքից, հանրապետությունից, անկախ բացակայության պատճառից), սեռի, տարիքի, կրթական մակարդակի և տնտեսությունում գյուղատնտեսությամբ զբաղվածության վերաբերյալ տվյալները: Տնտեսության անդամների (բացառելով տնտեսության այն անդամների կողմից կատարված աշխատանքները, ովքեր նշված ժամանակահատվածում գտնվել են հանրապետությունից

դուրս) գյուղատնտեսությամբ զբաղվածության վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է 2019թ.-ի հոկտեմբերի 11-ից մինչև 2020թ.-ի հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 11-ում տնտեսության անդամների սեռին, տարիքին, կրթությանը և գյուղատնտեսությամբ զբաղվածությանը վերաբերող տվյալները լրացվում են ուղղահայաց՝ յուրաքանչյուր հարցի պատասխանի համար նախատեսված վանդակում նշելով ընտրված համապատասխան ծածկագիրը:

Աղյուսակ 11-ի տնտեսության այլ անդամներ հատվածում ուղղահայաց ուղղությամբ, *բացի տնտեսության գլխավորից*, հնարավոր է/ նախատեսված է լրացնել տնտեսության 15 տարեկան և բարձր տարիքի ևս 9 անդամների վերաբերյալ տեղեկատվություն, սակայն հատվածը լրացվում է յուրաքանչյուր տնտեսությունում 15 տարեկան և բարձր տարիքի անդամների թվաքանակին համապատասխան:

«**Սեռը**» /կոդ 01/ տողում համապատասխան սյունակներով լրացվում է տնտեսության անդամների սեռին համապատասխանող ծածկագիրը:

«**Տարիքը**» /կոդ 02/ տողում համապատասխան սյունակներով լրացվում է հարցման պահին տնտեսության յուրաքանչյուր անդամի տարիքային խմբին համապատասխանող ծածկագիրը:

«**Կրթությունը**» /կոդ 03/ տողում համապատասխան սյունակներով լրացվում է տնտեսության յուրաքանչյուր անդամի կրթական մակարդակին համապատասխանող ծածկագիրը:

«**Գյուղատնտեսությամբ զբաղված ամիսները**» /կոդ 04/ տողում համապատասխան սյունակներով լրացվում է տնտեսության յուրաքանչյուր անդամի միայն տվյալ տնտեսությունում գյուղատնտեսությամբ զբաղված լինելու

տնտեսության մասին տեղեկատվությունն ըստ համապատասխան ծածկագրերի: *Տնտեսության անդամի տնտեսությունից դուրս գյուղատնտեսությամբ զբաղվելու տնտեսության մասին տեղեկատվությունը չի ներառվում տվյալ անդամի գյուղատնտեսությամբ զբաղված լինելու աղյուսակի համապատասխան սյունակում:*

Ուշադրություն` էթե տնտեսության անդամներից մեկը **11.10.2019թ. – 10.10.2020թ. ժամանակահատվածում բացակայել է տնտեսությունից.**

-սակայն նշված ժամանակահատվածի որոշակի ժամանակաընթացքում տվյալ տնտեսությունում զբաղվել է գյուղատնտեսությամբ, ապա նրա գյուղատնտեսությամբ զբաղված ամիսների վերաբերյալ տեղեկատվությունը նշվում է համապատասխան սյունակում,

- և գործունեություն է ծավալել այլ վայրում գյուղատնտեսության ոլորտում, ապա նրա գործունեության վերաբերյալ զբաղվածության ամիսները սույն հարցաթերթում չեն ներառվում, համապատասխան սյունակում գրվում է «0»:

Հարց 22. Տնտեսության գլխավորը կամ անդամներից որևէ մեկը մասնակցել է գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների (11.10.2019թ. – 10.10.2020թ.)

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (էթե տնտեսության գլխավորը կամ անդամներից որևէ մեկը **նշված** ժամանակահատվածում մասնակցել է գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների` նշելով պետական, թե այլ ծրագրի շրջանակում է այն կազմակերպվել) կամ «Ոչ» (էթե տնտեսության գլխավորը կամ անդամներից որևէ մեկը **նշված** ժամանակահատվածում չի մասնակցել գյուղատնտեսության

ուլորտի վերաբերյալ վերապատրաստման դասընթացների) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել նշում (X):

Հարց 23. Տնտեսության գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված աշխատողներ (ղրամային և/կամ բնամթերային վարձավճարով)
(11.10.2019թ. – 10.10.2020թ.)

Աղյուսակ 12-ը լրացվում է միայն այն տնտեսությունների համար, որոնք նշված ժամանակահատվածում իրենց տնտեսությունում գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար ներգրավել են աշխատողներ (ղրամային և/կամ բնամթերային վարձավճարով):

Աղյուսակը լրացվում է հետևյալ կարգով.

«Գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված աշխատողներ, ընդամենը» /կող 05/ տողում 1-ին սյունակում լրացվում է ընդամենը ներգրավված աշխատողների թվաքանակը, 2-րդ և 3-րդ սյունակներում նշվում են ներգրավված աշխատողների ընդհանուր թվաքանակից կանանց և տղամարդկանց թվաքանակները:

«Մինչև 1 ամիս» /կող 06/, «1-4 ամիս» /կող 07/, «4-7 ամիս» / կող 08/, «7-10 ամիս» /կող 09/ և «10-12 ամիս» /կող 10/ տողերում, ըստ համապատասխան սյունակների, նշվում են տնտեսությունում գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար նշված ժամանակահատվածում ներգրավված աշխատողների (ղրամային և/կամ բնամթերային վարձավճարով) ընդամենը թվաքանակը, որոնցից 2-րդ և 3-րդ սյունակներում համապատասխանաբար առանձնացվում են կանանց և տղամարդկանց թվաքանակները:

**ԲԱԺԻՆ X. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ**

**Հարց 24. Տնտեսությունում արտադրված
գյուղատնտեսական արտադրանքի օգտագործման
ուղղությունները
(11.10.2019թ. - 10.10.2020թ.)**

Ընդհանուր տեղեկություններ

Միայն սեփական սպառման համար արտադրված գյուղատնտեսական արտադրանքն իր մեջ ներառում է ինչպես արտադրանքի պարենային սպառումը՝ ներառյալ հարազատներին, ծանոթներին, ընկերներին, հարևաններին և այլոց օգնության կարգով անհատույց տրված, բարեգործական նպատակով օգտագործված արտադրանքը, այնպես էլ տնտեսական սպառումը՝ անասնակեր, սերմ և այլն:

Հարցաթերթի տվյալ հարցում գյուղատնտեսական արտադրանքի օգտագործման ուղղությունների վերաբերյալ տվյալները վերաբերում են միայն տնտեսության կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքին:

Աղյուսակ 13-ի «Բ» սյունակի համապատասխան տողերում նշված են գյուղատնտեսական՝ բուսաբուծական և անասնաբուծական, արտադրանքի հիմնական տեսակները:

Աղյուսակ 13-ի 1-ին՝ «Միայն սեփական սպառման համար» սյունակում (X) նշում կատարվում է տնտեսությունում արտադրված այն գյուղատնտեսական արտադրանքի դիմաց, որն արտադրվել է միայն սեփական սպառման համար:

Աղյուսակ 13-ի 2-րդ՝ «Հիմնականում՝ 50% և ավելի, սեփական սպառման համար» սյունակում (X) նշում կատարվում է տնտեսությունում արտադրված այն

գյուղատնտեսական արտադրանքի դիմաց, որն արտադրվել է **հիմնականում սեփական սպառման համար:**

Աղյուսակ 13-ի 3-րդ՝ «**Հիմնականում՝ 50% և ավելի, վաճառքի համար**» սյունակում (X) նշում կատարվում է տնտեսությունում արտադրված այն գյուղատնտեսական արտադրանքի դիմաց, որն արտադրվել է **հիմնականում վաճառքի համար:**

Աղյուսակ 13-ի 4-րդ՝ «**Միայն վաճառքի համար**» սյունակում նշում (X) կատարվում է տնտեսությունում արտադրված այն գյուղատնտեսական արտադրանքի դիմաց, որն արտադրվել է տնտեսության կողմից՝ **միայն վաճառքի համար:**

**Հարց 25. Տնտեսությունում արտադրված
գյուղատնտեսական արտադրանքն օգտագործվել է
(11.10.2019թ. - 10.10.2020թ.)**

Պատասխանողը պետք է որոշի՝ տնտեսությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքը նշված ժամանակահատվածում ի նշ ուղղությամբ է օգտագործվել՝ **հիմնականում սեփական սպառման համար** կամ **հիմնականում վաճառքի համար:**

Եթե տնտեսության կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի կեսից ավելին նշված ժամանակահատվածում սպառվել է տնտեսությունում, ապա հաշվարարի կողմից (X) նշում կկատարվի **հիմնականում սեփական սպառման համար** ուղղությանը համապատասխանող վանդակում:

Եթե տնտեսության կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի կեսից ավելին նշված ժամանակահատվածում հիմնականում վաճառվել է, ապա հաշվարարի կողմից (X) նշում կկատարվի **հիմնականում**

վաճառքի համար ուղղությանը համապատասխանող վանդակում:

Հարց 26. Տնտեսությունը զբաղվե՞լ է գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ (11.10.2019թ. - 10.10.2020թ.)

Գյուղատնտեսական հումքի և արտադրանքի վերամշակումը տեխնոլոգիական գործընթաց է (եփում, չորացում, ապխտում, թթվեցում, խմորում, թորում, հնացում, պահածոյացում և այլն), որի արդյունքում գյուղատնտեսական հումքի և արտադրանքի ֆիզիկական և (կամ) քիմիական կազմը զգալիորեն փոփոխվում է:

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում զբաղվել է ինչպես սեփական տնտեսությունում արտադրված, այնպես էլ այլ տարբերակներով ձեռք բերված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում չի զբաղվել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել (X) նշում:

Հարց 27. Վերամշակված գյուղատնտեսական արտադրանքը վաճառվե՞լ է (11.10.2019թ. - 10.10.2020թ.)

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում զբաղվել է վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի վաճառքով) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում չի զբաղվել վերամշակված

գյուղատնտեսական արտադրանքի վաճառքով) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել (X) նշում:

ԲԱԺԻՆ XI. ԱԳՐՈՏՈՒՐԻԶՍ

(ներառյալ այլ համայնքներում/բնակավայրերում)

Հարց 28. Տնտեսությունը զբաղվե՞լ է ագրոտուրիզմի ծառայությունների մատուցմամբ (11.10.2019թ. - 10.10.2020թ.)

Զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է:

Ագրոտուրիզմը զբոսաշրջության տեսակ է գյուղական վայրում, որը ենթադրում է և թույլ է տալիս այցելուներին, զբոսաշրջիկներին, հատկապես՝ քաղաքաբնակներին գիտելիքներ ձեռք բերել գյուղատնտեսության վարման մասին, ծանոթանալ գյուղատնտեսական **արտադրանքի արտադրությանը** (*հնարավորություն ընձեռելով ցանկության դեպքում անմիջական մասնակցություն ունենալ հողի մշակման, ոռոգման աշխատանքներին, բերքահավաքին և այլն*), ճաշակել բնական թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես նաև **ծանոթանալ** -գյուղական միջավայրը բնորոշող ոչ սովորական ժամանցի ձևերին և **օգտվել** դրանցից:

Ուշադրություն՝ հաշվարարը պետք է պատասխանողին պարզաբանի, որ սա գործունեության յուրահատուկ տեսակ է, և այն չպետք է նույնացնել գյուղական վայրերում կարճ

ժամանակով քաղաքաբնակների այցելության և տունը պարզապես վարձակալմամբ տրամադրելու հետ:

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում զբաղվել է ագրոտուրիզմի ծառայությունների մատուցմամբ) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը նշված ժամանակահատվածում չի զբաղվել ագրոտուրիզմի ծառայությունների մատուցմամբ) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել (X) նշում:

ԲԱԺԻՆ XII. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ

Հարց 29. Գյուղատնտեսական նպատակով ստացված վարկեր, սուբսիդիաներ ու ստացման աղբյուրներ (11.10.2019թ. - 10.10.2020թ.)
(կարող է լինել մեկից ավելի պատասխան)

Եթե հարցվողը նշի, որ նշված ժամանակահատվածում տնտեսությունը վերցրել է վարկեր բանկից և/կամ այլ աղբյուրներից կամ ստացել սուբսիդիաներ պետությունից և/կամ այլ աղբյուրներից, ապա հաշվարարի կողմից համապատասխան վանդակում/ վանդակներում կատարվում է/են (X) նշում/նշումներ:

ԲԱԺԻՆ XIII. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ «Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարի միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը»:

Ամենապարզ սահմանմամբ՝ կոռպերատիվն իր անդամների կամ մասնակիցների համար ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքներով ստեղծված միավոր է, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում առաջացած ռիսկերն ու շահույթը՝ կոռպերատիվից ստացված ծառայությունների շրջանակում:

Հարց 30. Տնտեսությունը հանդիսացե՞լ է գյուղատնտեսական կոռպերատիվի անդամ (11.10.2019թ. - 10.10.2020թ.)

Անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» (եթե տնտեսությունը **նշված** ժամանակահատվածում **հանդիսացել է գյուղատնտեսական կոռպերատիվի անդամ**) կամ «Ոչ» (եթե տնտեսությունը **նշված** ժամանակահատվածում չի **հանդիսացել գյուղատնտեսական կոռպերատիվի անդամ**) տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել (X) նշում:

Եթե նշված ժամանակահատվածում տնտեսությունը չի հանդիսացել գյուղատնտեսական կոռպերատիվի անդամ, ապա անցնել հարց 32-ի լրացմանը:

Եթե նշված ժամանակահատվածում տնտեսությունը հանդիսացել է գյուղատնտեսական կոռպերատիվի անդամ, ապա լրացնել 31 հարցին համապատասխանող **աղյուսակ 14-ը**:

Հարց 31. Գյուղատնտեսական կոռպերատիվի ձևերը և գործունեության ուղղվածությունը

Աղյուսակ 14-ի առաջին հատվածը վերաբերում է գյուղատնտեսական կոռպերատիվի ձևերին, եթե պատասխանողը կնշի, որ տնտեսությունը նշված

Ժամանակահատվածում հանդիսացել է «սպառողական գյուղատնտեսական կոոպերատիվ» /կոդ 01/ կամ «առևտրային գյուղատնտեսական կոոպերատիվ» /կոդ 02/ կոոպերատիվի անդամ, ապա համապատասխան տողերում, ըստ առաջին սյունակի, կկատարվի (X) նշում:

Աղյուսակ 14-ի 2-րդ հատվածը վերաբերում է կոոպերատիվի գործունեության ուղղվածությանը՝ հնարավոր է ունենա մեկից ավելի ուղղվածություն: Պատասխանողի կողմից ընտրվում է նշված ուղղություններից **մեկը կամ մի քանիսը**, իսկ «այլ (նշել)» /կոդեր 07, 08, 09/ տողերում նշվում է կոոպերատիվի ուղղվածությունը, եթե այն չկա վերը թվարկվածների շարքում, այնուհետև, ըստ համապատասխան սյունակի, կատարվում է/են (X) նշում/նշումներ:

ԲԱԺԻՆ XIV. ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Ներտնտեսային հաշվառումը տնտեսության կողմից գյուղատնտեսության (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա մի հատվածի) վարման վերաբերյալ կատարված ցանկացած տիպի հաշվառման իրականացումն է:

Հարց 32. Տնտեսությունը վարե՞լ է ներտնտեսային հաշվառում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և կատարած ծախսերի վերաբերյալ (11.10.2019թ. - 10.10.2020թ.)

Հարցի պատասխանը լրացնելու համար անհրաժեշտ է ընտրել հարցաթերթում առաջարկվող «Այո» կամ «Ոչ» տարբերակներից մեկը և համապատասխան վանդակում կատարել (X) նշում:

Ուշադրություն՝ «Այո» պատասխանը ներառում է ոչ միայն գյուղատնտեսության ամբողջ ոլորտի վերաբերյալ

հաշվառման վարումը, այլ նաև դրա մի հատվածի/հատվածների վերաբերյալ հաշվառման վարումը:

Հարց 33. Հարցաթերթի հարցերին պատասխանել է

Այս հատվածը լրացնելու համար հաշվարարը մեկ անգամ կամ ճշտում է, հարցաթերթի հարցերին պատասխանողի կարգավիճակը տնտեսությունում և առաջարկվող տարբերակներից որևէ մեկին համապատասխանող վանդակում կատարում համապատասխան (X) նշում:

«33.3 տնտեսության գյուղատնտեսական աշխատանքները վարողը» տարբերակին համապատասխանող վանդակում (X) նշանը դրվում է այն դեպքում, երբ տվյալ տնտեսության վերաբերյալ տվյալները հաշվարարը լրացրել է տնտեսության գյուղատնտեսական աշխատանքները վարող անձի խոսքերով: Ընդ որում, չպետք է մոռանալ, որ պատասխանը ենթադրում է, որ տվյալ անձը տնտեսության անդամ չի հանդիսանում:

«33.4 համայնքապետարանի աշխատակիցը» տարբերակին համապատասխանող վանդակում (X) նշանը դրվում է այն դեպքում, երբ տվյալ տնտեսության վերաբերյալ տվյալները հաշվարարը լրացրել է համայնքապետարանի աշխատակիցների օգնությամբ:

Համայնքապետարանի աշխատակցի օգնությամբ լրացվում է միայն այն տնտեսությունների հարցաթերթերը, երբ մի քանի անգամ այցելելուց հետո հաշվարարին չի հաջողվել հանդիպել տնտեսության անդամներից որևէ մեկին՝ հարցման ժամանակահատվածում համայնքից, հանրապետությունից բացակայելու պատճառով:

Գյուղատնտեսությանը զբաղվող տնտեսության «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթը» և, եթե անհրաժեշտ է եղել, նաև «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածը» լրացնելուց հետո հաշվարարը խնդրում է հարցերին պատասխանող տնտեսության անդամին ասել իր անուն-ազգանունը և լրացնում հարցաթերթի վերջում առանձնացված մասում, որպեսզի հետագայում առաջացած հարցերի ու անճշտությունների դեպքում հայտնի լինի, թե ում հետ է անցկացրել հարցումը, շնորհակալություն հայտնում տրամադրած ժամանակի և տեղեկատվության համար, մեկ անգամ ևս համոզվում, որ ոչ մի հարց բաց չի թողել և հարցաթերթը լրացրել է ամբողջական և պատասխանողի կողմից տրված պատասխաններով, դնում է իր ստորագրությունը և հարցաթերթի լրացման ամիս-ամսաթիվը:

Եթե տվյալ տնտեսության համար լրացվել է/են նաև հավելված/ներ, ապա անհրաժեշտ է դրանք տվյալ տնտեսության համար լրացված հարցաթերթի հետ միասին դնել նախատեսված թափանցիկ ֆայլի մեջ, սակայն չխախտել պայուսակում հարցաթերթերի դասավորվածությունը:

Հրահանգիչ-հսկիչը հարցաթերթում դնում է իր ստորագրությունը և տվյալ հարցաթերթի ստուգման ամիս-ամսաթիվը հարցաթերթերը ստուգելուց հետո միայն: